

13364

891.99

5-34



ՅԱՐՈՒԹՅԻՆ Յ. ՄԱՐՍԵԼԵԱՆ.

ՀԱՅԳԱԾ ՕՉԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ Ի Ց

Մի

ՑԻՇՈՂՈԽԹԻՆ

ՀԱՅՈՎՈՐԱԿԵց

ՑՈՎՀԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ա Կ Ա Լ Յ Ա Ա

ՄԱՐՏԻ ՎԱՐԱՐԱՐԱՅԻՆ ՏՈՒՐԱՆ

1889

~~891.33~~ 3 453  
15-34  
ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՐՍԼԵԱՆ.

# ՔԱՆԴԱԿ ՕԶԱԿ

Ա Ն Ց Ե Ա Լ Ի Ց

ՄԻ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Հրատարակեց

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ

2003

1889

Ա. Խ Ա. Լ Յ Խ Ա



3033

53

# ԱՐՅՈՒԹԻՒՆ

ԾՐԱՎԵՐ

ԱՄ

ԾՐԱՎԵՐ

Դозволено ценз. Тифлисъ, 3 Августа 1889 г.

2180 - 57

Արտատպած «ՆՈՐ-ԴԱԲ» տմենութեալ թերթից:

## ՔԱՆԴԱԿ ՕՂԱԿԻ

Ս.

Սօլոմոն Պետրովիչը հարսաւս վաճառականի որդի էր: Թէ և նա, մէ ժամանակ աշակերտել էր անուանի Յարուժին վարժապետի մօտ, բայց այնքան էլ բան չէր սովորել: Տառերը ճանաչում էր և կակագեղով կարողանում էր կարգալ, այն էլ առանց հասկանալու, իւր հօրից մնացած աւետարանը, որին ևս ժառանգաբար մնացէլ էր իւր սապերից: Հայերէն գրել չգիտենալու պատճառով, զորք էր ածում վրացերէն, որ զսեթէ տիլապետում էր: Գեռ ևս իւր հօր կենդանութեան ժամանակ պարագութ էր վաճառականութեամբ: Հայր և որդի բարական մեծ առաջադիմութիւն էին արել վաճառականութեան մէջ և բաւականին ևս բեկուն էին:

Մի անդամ, լանկացակի այրուեցաւ նրանց խայ-

նութը իւր միջի ապօանքներով և մեծ վնաս պատճառեց նրանց. Հարուածը այնքան գգալի եղաւ, որ հայրը չկարողանալով տանել, յանկարծամահ եղաւ, Թողնելով մնացած չնչին հարստութիւնը իւր մեակ ուղու՝ Սօլօմօն Պետրովիչին:

Հօր մահից յետոյ 28 տարեկան Սօլօմօնը սկսեց կարգի ձգել իւր խանգարուած գործը: Նա իւր աւորեայ կեանքում այնքան չափաւոր էր, որ շատ անգամ ժամանակաւոր էր համում: Նշա գերդաստանը մեծ չէր. բազիացած էր միայն իրենից և մի պառաւ մօրից, որի մահուան նա սպասում էր, և այս հանգամանքի մէջ բաւական մեծ հաշու կար: Նա արդէն ծըագրել էր, թէ լնչ միջոցներով պէտք է հարստանար: Նա որոշել էր, իւր ժօր մահից յետոյ ծախել տան բոլոր կահ կարասութեալ գարդեղը և մինչեւ անգամ տունը և, աւելացնելով այդ փողը իւր դրամագլխի վրայ, վարձել մի այնպիսի խանութ, որի ետքում, ինչու ինքն ասում էր, մի ժոկ էլ լինէր, որտեղ և կարուղանար տպաւել և սկսել իւր հեցը պայմանաւոր համար միջոցներ ուսնել:

Շատ շուտով իրագործուեցաւ նրա մտադպութիւնը: Մի տարի շանցած մեռաւ նրա պառաւ մայրը և թաղեւոց մի ամիս յետոյ, ծախծինց եղած չեղածը և մի պատկառելի գումար գուացնելով աւելացրեց այն իւր զբամագլխի վրայ և սկսեց իւր վաճառականութիւնը: Ամեն, մինչեւ իսկ աններեւ ժիջոց գործ գրեց իւր գործին աւելի ընդարձակութիւն տաշու և շնորհեց իւր չափաւորութեան և հաստատմանութեան, կարճ ժամանակում կա-

բողացաւ. մի քանի հազարի տէր դասնալ:

Ընկեր վաճառականները, տեսնելով նրա տարօքնակ կեանքը, զարմանում և եթեմն ծիծաղում էին նրա վրայ...:

Շատ անգամ նրանք խորհութեց էին տալիս «տնաւորուել», որովհետեւ այզպիսի կեանքը, պառաւմ էին նրանք, վայել է միայն անսասնեին և ոչ մարդուն. իո՞ նա բաւական ապահովուած է նիւթականապէս: Նրան հասկացնում էին ամուսնութեան նշանակութիւնը և կարեւորութիւնը և առաջարկում էին ամուսնանալ: Ապահն Սօլօմօն Պետրովիլիք համար նրանց խօսքերը գրու արժէք չունեին. նրա մէկ ականջից մտնում էին, միւսից դուքս գալիս:

—Դուք էլ ուզում եք մարդ կամիս... Էտ է Եւել խափեցիք ու գնաց... աօ, պատկվելուս վուն է, սազ աշխատաքը սովէ է ննդի, մարդ իրան գլուխը ձևիվ \*) է պահում, կնիկ վհնոց պիտի պահի: Ճենց գիտենաս հիշտ է .. Միւթամ դուք վուր պատկիւ եք, մինչ բախտաւորութիւնի մէջն եք ննդի, իս է մնացի: Հիմի, իս օրէնք մէ արասով, շատ շատ հինգ շահով ապսում ին, ամա կնիկ վուր ունենամ ձիք արթւր գիտենայ էւկոր մանէթն էլ հեթեք չի զայ... բայ կնդայ «Էս պիտին ու էն պիտին». էն վախտը պիտիմ վե կալնի գլուխս ու ջուրը ննդին էւի... Զէ ականչը, ինձմէն ձիուր վիկալէք... պատկվոզ մարդուն ուղիղ ափդ պաթեցիք, առաւմ էր շատ անգամ Սօլօմօն Պետրովիլիք:

Եթե բարեկամները հարցնում էին նրան, թէ

\*) Հազիւ

աղդքան պահանջարք (վողը) ում համար է հաւաքում,  
քանի որ ոչ կին ունի, ոչ որպի, ոչ քոյզ և ոչ եղ-  
րաբ, նա միշտ պատասխանում էր, թէ ինքն փող  
չունի և թէ այսակսի ժամանակ փող աշխատուել չէ  
կարելի, նրա համար «վուր մուղի քեսատութին է,  
կեանքը գժարացել է ու առուտուր էլ չկալ»:

— Տէ, ինչի՞ք ասում, հիմի ով է փուղ աշխատում:  
Ու էլ փուղ ունէ, էն էլ հօրեմէն է մնացած, ան  
բայեկմիմէն: Առուուծ գլուենայ, հաւատացնում էր  
նա, — որէնը էրկու կրեք մանէլ չեմ կանացի աշխա-  
տի: Մէ չորս հարուց թուման բաւէ քուր ունենամ,  
էն էլ վախենում իմ, թէ ձեռնեմէս չգնայ ու սառը  
քարի վրէն չնստիմ: Խօմ գլուիք, փուր չուրս հարուր  
թումանը վումչիչ փուղ չէ վաճառականութենի հա-  
մար... Ետ է, փուր մսէմէս կտրում իմ ու փուղեմէս  
չիմ պականեցնում: Բայ ինչի՞ համա իմ էսէնց աս-  
րում...: Սամօժնիկի չէքայ: չիմ հաքնում, փուր  
վաքսի փուղ չտամ: Խօմ գլուիք, թէ իմ ողորմած  
հոգի հէրը, ինչ զուքսով էր զուս դալի փողոց: Արա  
հիմի ինձ վունց իք տեսնում...: Միտևայի շապիկ  
տիւ չմի շապիկ իմ հաքնում, թէ ինչէ կիբուր  
չերեալ: Միզայ Աստծու... Միզայ Աստծու, շատ  
վախտ ժամն էլ չիմ գնում, թէ ինչ է գանձանակ  
ու մումին փուղ չտամ... Թէ մէ մէ գամ հոգիս  
միսս է ննզում ու ժամն իմ գնում, գանձանակի  
վուխտը դուս իմ գալի... Յիթամ խիստ իմ դաթքի  
ու ուզում իմ, փուր հանգստանամ: Գանձ դուր իմ  
ապրուստը չիք գիղիմ... իմ ուաթին էլ իսօմ գիտիք  
ու տեսնում իք: Նարթէնը մէ էրկու գամ տաք կե-  
րակուր իմ ուտում, մէկէտ օրերը պանիք հացով իմ

եռլայ գնում... Առուուծ ձիկ մէջ իմ բերում, ամիս-  
նիվ է անցնում, դոշի, թագար ձգան, խիզիւալի,  
ան լաւ բախտակի, ան սուլիու ու խոշի հարաբէ՛  
իմ մնում: Զայն խօմ կերակից կերակիւ իմ խմում,  
էնզուր փուր ախակէ չայ—շաքրին առւած փուզն ու  
Քուումն ածած մէ հիսար է: Հիմի զուք կեանգնիւ  
եք թէ կնիկ ուգէ, չիմ գեղի ինչվիք կրսցըի... Հի-  
մի էնէնց ժամանակ է էկի, փուր պատկիվը չի բի...  
Հմ. գնամ ստակիլի, իվոր 20,000 թուման ունենաս.  
Թէկուզ զրա կիսի հինչաք էլ մուլք, եփօր աղջիկը  
սիրուն ըլի, լաւ հօր գլութի ըլի, լաւ փուր ունե-  
նայ ու լաւ բաժինք: Համա, էստուք հիմի ով  
կուտայ... Յաճամ վերջացնում էր նա իւր խօսքերը:

Խօմօն Պետրովիչը նիւթական կողմից, խօսպէս  
այն չէր, ինչակս իրեն ներկայացնում էր: Նա հա-  
մոզուած էր, որ եթէ ուրիշներն իմանան իւր կարո-  
ղութեան չափը և կամ ինքը սկսէ լաւ ապրեւ  
անպատճառ իրեն «աչք կուան» և այս էր պատ-  
ճառը, որ թէկ ինքը այն սոպէին 40,000 բուրլու  
կարողութիւն ունէր, բայց այնու ամենանիւ իրեն  
աղքատ էր չեացնում.

Բ.

Չմէրակին ցրտաշունչ օրերից մինն էր:

Սոլօմօն Պետրովիչը իւր խանութի առաջ զրա-  
դուած էր ապրանքի հակեր բանալով, որ մէ երկու  
ժամ առաջ առացել էր Առուիսից:

Որովհետեւ գործակատար չունէր, ստիպուած ին-  
քըն էր աեզարուում ապրանքը գարանների վրայ

և մաքրում փոշին:

— «Գուղթը ին հարամգադէքը» ասում էր նա գողծակատարների համար: Լուս ու թաքուն կը բերէ դով խօսէին և տունը քանդում ին և խօսնց բանը դրսուո՞ւ»:

Գործակատարի տեղ նա պահում էր մի հատ դժուակ բիջ շաբաթը 25 կոպէկ տէլէրտառով: Այդ ծառան աւելում էր խանութը և կատարում էր խանութի մամն ծառայութիւնները, խոկ ինքը ծախում և դաշտար էր ձգում:

Քաւական յօդնելուց և վոշոտուելուց յետոյ, նա փակեց խանութը և որովհետեւ հարկաւոր էր մաքրուել վոշից, նա զնաց բաղանելք, լողանալուց յետոյ վերադարձաւ տուն և թէի պատրաստութիւն տեսաւ, որովհետեւ «քաղնապահ» չայն խիստ է դուք գալի մարդուն» համոզուած էր նա: Մի քանի բաժակ խմելուց յետոյ,—ի հարկէ կծովի, առանց շաքար ձգելու, որովհետեւ, նրա կարծեքով, «շաքարը վուք գցում իս, չայի լազաթը կորչաւմ է»— մտաւ անկողին: Սօլօմօն Պետրովիչը յսենեակ տաքացնելու սովորութիւն չունէր, որովհետեւ նա դժուարանում էր փայտին փող տալու....

— «Տօ... վուղը մարթ կուեսէ», խոկ ուրեխների առաջ բժշկական փաստեր բերելով էր արդարանում: ախպէս օրինակ նա քարոզում էր, որ «տաքութիւնը մարդու խարաբ է անում, ամա ցուրտը առողջացնում, զայիմացնում ու գուս է կանգնացնում մարթու»:

Սակայն այս անգամ լողացաւ և քրտնած լինելով, ցուրտը փոխանակ դուս յանքնեցնելու հիւանդա-

ցրեց և Սօլօմօն Պետրովիչին անկողին ձգեց: Իրրեռինչ չ'պատահած, հետեւեալ օրը հագնուեցաւ և կամինում էր խանութը մտնելու... և մտաւ... բայց, սաստիկ տաքութիւնը և գլխի պտոյար շատ զժուարացըն գործը:

Նա սաստիկ մտատանջութեան մէջ ընկաւ, ոչ թէ նրա համար, որ ինքը հիւանդ էր, այլ այն սպատճառով, որ խանութում մարդ չունենալով, առեւտուը պէտք է դադարեցնէր և փակէր խանութը: Նա վճռեց չփակել, այլ «գուշէն հայրած պահանջել չունելու գիշերը պարագաները և պարձեց իւր հիւանդութեան վրայ և մի կերպ կարգացաւ տառապուրը շարունակել: Երբորդ օրը այնքան տաստկացել էր նրա տաքութիւնը և այնքան թուրացել մարմինը, որ անկողինց վերկենալ չկախողացաւ:

Բայց հարկաւոր էր խանութը բանաւ: Որովհետեւ խանութը բանալու համար՝ հարկաւոր էր անցնել իւր սենեակից և մտնել խանութը, նա կրկին վորձեց վերկենալ—չկարողացաւ: Եւ ապա չգտնելով ոչ մի միջոց չորէշոք զնաց բացեց խանութի դուռը և տեսաւ, որ իւր «գուքնի բիջը» դուքսը, ցրտի մէջ կանգնած, սպասում է:

Խեղջ տղան, նայելով իւր չոքած խօսէինին, ըսկզբում կարծեց, թէ զրան չէմքում չոքած աղօթք է անում, բայց վերջը տեսաւ, որ իւր խօսէինը աշխատում է ոտքի կանգնել և չէ կարողանում:

— Տուն արի տօ... արի ձեռնեմէս բռնէ...:

— Ի՞նչ էլաւ քեզ աղա, ինչի՞ իս էտէնց անում հարցրեց զարմացած տղան:

— Խ՞նչ գլուխիմ վուրթի, խիստ հիւանդ իմ, վուտի վոխն չիմ կանացի կանգնի:

Տւան րունելով աղաք ձեռքից, հաղիւ հազ կարտացաւ հասցնել երլորդ սենեակը, որ և թափառի վրայ պառկեցրեց:

— Կըշտեմէս չցանկիս թէ չէ կուսպանիմ... հրամայեց աղան և փակից աշքերը:

Մի վոքը ժամանակից յետոյ, տաքութեան աղգեցութեան ամպ, սկսեց զուտանցել: Տղան վախենալով այդ տեսաւանից, լեզապատառ գուրս փախաւ խանութից, մտաւ հարբ ան խանութը և յայտնեց, որ էւր խօզէնը «գդզիլ է սոլիցէք»:

Հարց ան վահառականնեւը ներս մանելով խանութ տեսան Սալօմօն Պետրովիլին անզգայ զբութեան մէջ: Խակոյն բժիշկ կանչեցին և շնորհիւ բժշկի առանձ գեղերի, մի ենիու օրուան ընթացքում տաքութեանը գզալի կերպով նուազելով, փաքը ինչ առողջացաւ և ուշքի եկաւ:

— Ճ՛, քիզ վուր ասում ինք պսակիլ, այ սրա համար ինք առում, Դիտիս թն օրումն էիր... մինք վուր չէինք ըլլի ին անտէրութենեմէն կումեանէիր... Հարստաթիւն թնչ կօնխ, ջանսազութիւն վուր չի ունենայ: Կնիկ վուր ունեցել էիր, իս հաւաքնումը չէիր ըլլ պառկած առանց տաք կերպիրի ու մտիկ անզիք չէիր ըլլի... Տօ՛, չիս տեսնում, վուր մէ սուսքան ջուր հասցնող չունխ, էտենց վուր անում իս, թնչ իս փեքը անում: Զենց զցէ թէ էն օրը չէիր վեկացի ու դուքնի գուուը չէիր բայ արի... Առառած վուչ անէ մէրաշ էստի մեռել էիր կողպած զուքնումը: Ավ էր քու անէրը: Ա' մուլթ է, ամում, հիմի էրա

փեքը արա, միղք իս, ջէր ջահիւ իս, ինըկ ուզիւը հարկաւուք է. այ... էս օրուան համար է հարկաւուք:

Սաս անգամ Սօլօմօն Պետրովիլը ուշադրութեամբ լուռմ էր նրանց ասածները... նա սկսեց քննել և ըստ երեւթիւն նա համոզուեցաւ, նա սկսեց յաց մնել և գոհութիւն տալ Աստուծուն, որ ինքը անտէրութենից չմեռաւ և խոստացաւ կատարեցաւ պէտքանալուց յետոյ ոչ միայն «մէ թօխիլ շուր գցել» \*) ալլ և ամուսնանալ:

Առողջանալուց անմիջապէս յետոյ, նա սկսեց պատրաստութիւններ տեսնել: Մասալ անելուց յետոյ, նա արժան գնով աճուրդի մէջ գնեց ոմն Ա... վի երկարկանի տոմեր: Հայէաւոր վերանորոգութիւններն անելուց յետոյ, սկսեց հոգալ տան սարդ ու կարգի վրայ և ամիս չանցած սունը սւատրաստ էր եւր սոլոր յարմարութիւններով:

Նա մտքումը զսել էր բարեկենզաններին ամուսնանալ և այդքան կարձ ժամանակամիջոցը չէր արգելում նրան հարուստ հարսնացու ընտրելու: Նա եւր յոյար զրել էր մօցքու 0 -ի վրայ, որ յայտնի էր Թիֆլիսում իւր ճարպիկութեամբ և բան բաշրելով: Այդ կնոջը յայտնի լինելով Թիֆլիսի բոլոր ժայռածունները: Նա գիտէր, թէ այս տարի ևւմ աղջիկն է պատրաստ պատկւելու, որքան է նրա օժիտը կամ մոզգը...:

— Իս քու չարը տանիմ, Սօլօմօն չան, էնէնց

\*) Մասալ անել:

աղջիկ գտնիմ քիզ համա, վունց վար դոչ ու իրադ. Քումայ փուղով ու բաժնքով... դուն արխէին կաց:

—Հա, դուն գիտիս էլի, քու աշխատանքն էլ չե կորչի. քիզ էլ մէ էքմին կուննպնի, սատասխանում էր Սօլօմօն Պետրովիչը:

Մօցիքու 0.-ն ուղիղ որ այնպէս աղջիկ գտաւ «Վանց վար դոչ ու իրադ»: Այս աղջիկը 16 տարեկան էր, և գուցեցի հարուստի որդի էր, նրա հայրը առաջնակարգ վաճառականներից մինն էր, նա համաձայնեց առա իւր աղջիկան Սօլօմօն Պետրովիչին 10,000 ըռութիւն օժիտուլ:

Բարեկենդան օրերը, մեծ հանգիսով կատարուեցաւ դրանց պատկը:

### Գ.

Պետրովիկ և մատուցալ կնոջ ազգեցութեան տակ, Սօլօմօն Պետրովիչը միանգամից մոռացաւ այն ամեն վաստակութիւնները, ոսոնք նրա մէջ ասես արմատացած լինէին...: Նա թոգեց իւր ժբառաթիւնը, թէկ շապառութիւն էլ չէր անում... նա սկսեց ասլուել ինչպէս հացին էր: Առաջուան ննան էլ «Ի՞ովէի համար նոր ոտքիւն»: Նա այժմ ծախսում էր, մինչեւ անգամ աւելի, քան թոյլ էր տալիս իւր կամքը: ՄԵ խօսքով, նա մոռանալով իւր անցեաւը, իւր տեսուր լիշտակիներով և պատկերներով. վերածնեց իրեւ նոր մարդ, մարդ՝ որ հասկանում էր կինցաղավարութեան վայելութիւնն և սիրուն կնոջ արժէքը:

Նա գոհ էր իւր ամուսնութիւնից, որովհետեւ նրա

կին Փեթեանը, ինչպէս ինքն ասում էր իւր անեւողը «Հէր օվնածը գրուստ Աստծու գառն էր»: Փեթեանը իրեն այնպէս խոնարհ, համեստ ու տնտես էր ցոյց տալիս, որ միանգամից կարգացաւ գրաւել իւր ամուսնու բարեհաճութիւնը և հաւատապատճենը: Փեթեանի միակ պակասութիւնն այն էր, որ մօղային խիստ էր հետեւում և ցանկանում էր, որ ոչ մի բանով ուրիշներից եւս չմնալ...: Նա այս կողմով և՛ վառակաչը էր և՛ հսկաբար...: Նա իրեն միշտ բարձր էր պահում ուրիշ կանացից և գրան օգնում էր իւր դիբքը և ամուսնու պատկառելի հարստութիւնը: Թէկ այս կողմը, նա մանաւանդ Փեթեանի արած շապալ ծախսերը Սօլօմօն Պետրովիչին շատ անգամ տհաճութիւն էր պատճառում, բայց ինչ պիտի անէր...:

—Դուն սիրու ուրախ պահէ... Փեթեան ջան գունց վուր ուղում իս էնէնց ապրի—ասում էր Սօլօմօն Պետրովիչը, երբ Փեթեանը իւր ցանկութիւնը կատարուած շտեսնելով, խռովում էր նրանից և քիթը կախ ձգում:

Ամուսնութիւնից իւսոյ անցել էր եօթը տարիւ Այս ժամանակամիջոցում Սօլօմօն Պետրովիչը վահառականական գործիրը շատ ընդառաջակառթիւն էին ստացել. իւր հարուստ աներոջ օգնութեամբ նա կարողացել էր Ռուսիայում մեծ անուն հանել... Նա այժմ Մօուկուտի և Ռուսիայի մեծ քաջարների մէջ եղած գործարանների հետ կապակցութիւն ունէր, Թէֆլիսում և գաւառական մի երկու քաջարուն և անութեան ունէր, որոնց կառավարում էին նրա գործակատարները և հաւատարմատուկները.

ինքը պատուած էր կառալներով, որից կարողացաւ մեծ փող վաստակել՝ ի հարկէ քանի մի անգամ վնաս կրելով:

Ամեն կողմից յաջողակ, միայն մի կողմից նա անխաջողութեան հանդիպեց, որ քիչ չներգուծեց նրա վրայ: Եօթն տարուան ընթացքում նա ունեցաւ երկու որդի՝ մինը տղայ—Պետրոս, միւսը՝ աղջիկ—Կատարինէ: Պետրոսը, միակ առու զաւակը լինելով, կազմում էր հօս միելաբութենը, սակայն հինգ տարեկան հասակում, ծագիկ հիւսնդութեամբ մեռաւ և մեծ վշտի մէջ ձեց Սոլօմօն Պետրովին:

Պետրոսի մահուանից յետոյ ծնողական քաղցր գոտուանքները և քնքոյց սէրը Կատարինէն էր վայելում:

Սոլօման ջան, պան էսէնց թողնել չի ցի, —ուսում էր Քեթեանը ցոյց տալով Կատարինէն: —Հիմքինց վուստ է էկի, վուր առանց ուսումի վունչի չէ ըլում: Լուացք անողի ու հաց թուղի աղջիկնքը ուսումներ ին առնում... ամութ չէ, վուր մինք միք ամաչկան առանց ուսումի թողնինք....

Սոլօմօն Պետրովիչը, թէե ուսման արժանաւորութեան մասին շատ քիչ, գրեթէ ոչինչ տեղեկութիւն չունէր, բայց ինքը նշանաւոր մարդկանց մէջ լինելով, տեսել էր, ոչ ամենքն էլ իրենց զաւակին ուսումնեն տալիս... ինքն ևս նշանցից ետ չմնաւու համար, վճռեց Կատարինէն ուսումնարան ուղարկել:

— Համար, վունց կուլի... ի հարկ է պիտի սովորի...

Քեթեան, զում չես գեղի, թէ ուսումը մարդու թիւ է անում... Ազգկերքը կարդում ին ու վերջը իրանց համա հացի ճանփայ է բաց ըլում... Համ էլ ուսում առած ամաչկայ ճաշութիւն շատ ին ըլում... նրանք շատ փայ անփուղ ին մաշղու գնում....

— Միզ էտունք թիւ հաշկաւուր է... հացի է պակաս թէ պանիւրը... Թուլ Կատարինէն ուսում առնէ, մէ երկու հազար թումանը մինձ բան չէ....

Ըհը... իրան տու տասչուրս շայէն... բաս էրկու հազար թումանը փուղ չէ..., խուրմա է... էտ լառ ումիկնիր իս տալի....

— Լաւ հա... հենց էս սահաթիս չի՞ սլսակում... բարի բերանդ մի բաց անի... — ասաց Քեթեանը ձեռքը դնելով Սուօմօն Պետրոսիւչի բերանին: Նոյն տարուան սեպտեմբերի մէկին Կատարինէն ընդունուեցաւ օրիորդական ուսումնարաններից մինում:

Կատարինէն շատ շուտ բնտելացաւ գալրոցական կանոններին, աչ մի օր զամից էնու չէր ընկինում և կաշիք ևս չկար, որովհետեւ Քեթեանը թուզ չէր տալիս իւր աղջիկան ընտանիկոն գործով պարապերու: Մինչեւ իսկ, առանց Քեթեանի միջամտութեան, տան աղախինը և ծառաները ամեն բան կարգի էին ձգում:

Կատարինէն ընտանիկան սամենայաջող պայմանների մէջ գտնուելով, ոչ մի բանէ կարասութիւն չէր զգում, սկսած հագուստից, որ ատշէնը մի քանի անգամ էր կարւում, մինչեւ զաւակոն ամենավերը չին պիտոյքը:

Ծնորհեւ լինաւանեկան շաջող պայմանների և, թիենին ժամանակ, իւր ջանասիրութեան և եռանդուն աշխատասիրութեան... կարողացաւ առքչց տարի փոխել դասատունը և տասն և հինգ տարեկան հասակում, ամենալաւ վկայականով աւարտեց գարողական դասընթացը:

Կատարինէի այդօրինակ առաջադիմութիւնը ձեծ ուրախութիւն պատճառեց ծնողներին, մանաւանդ Քեթեանին... որ ուրախութիւնից չէր կացողանում ոտքի վրայ կանգնիւ:

### Դ.

Կատարինէն, հայոց պատմնաբանն աւարտելուց յետոյ, յայտնեց ծնողներին, որ ինքը կամենում է ուսումը շարունակել և այդ նպատակով լինզրեց ուղարկել իրեն ուսուաց օրիորդական գիմնազիոնը: Մայրը տեսնելով, որ Կատարինէն ուսուաց լեզուի մէջ բաւական թոյլ է և խօսել չէ կարողանում, ինքն առաջինն եղաւ, որ ստիպում էր Սոլոմոն Պետրովիչին անպատճառ գիմնազիոն ուղարկել:

Չիս տեսնում վուր ուսերէն վաւնչիւ չէ իմաննում. միս հարի ան Մաթօն աղջիկը, հօրէսաւ էրկու տառի է առնելու շկոլումն է կարգում, մտիկ տու թէ էն գեղինը մտածը վունց է կրաքավում: Խօմ տեսնում իս, վուր հիմի առանց ստեղարի բան չէ պրսուում... էքուց էլոց կլուր պիտի տանինք .. տանցվար պիտի անի... հազար ու մէկ տեղ պիտի առաջ զցինք... ուսերէն վուր չիմանայ թնչ պիտի ըլի նրա հալը... մէնակ հայէվարը թնչ կոնիմ...

Ան ովկ է խօսում հեծի հայէվար... ամութ էլ է վուր բերանը հայէվար բաց անէ. հաւարարեցի, ան էրէվ-նեցի խօմ չէ... պատուաւուր քաղկցու աղջիկ է... պէտք է պատուականութիւն էլ ունենայ...

— Վանց կուլի քու բանը, — նկատեց Սոլոմոն Պետրովիչը հեգնօրէն, — տօ... դուն վուր Գորդցի իս... մէքին էլ մարդաբակ... թէ վուր զու էլ տաս պատ-ւաւուր քաղկցու կնիկ էլիս... ուսերէն ինչը չիս խօ-սում... թէ գիղիս...

— Ո՞վ ասու թէ չիմ զիդի, բաս դուն գիղիս, վրայ բերեց Քեթեանը կամըրելով:

— Բու մայա-տվալան, ան քու պաղիսուզին կենայ քու հօրանց թաշէքումը... աւել խօմ գրեն-չիւ չիս զիղիս...

— Հա լաւ չիմ զիդի... գնա քու աղջկան ոտվրեցու, նրան է հարկաւուր... նա է աշխարք զոս էկողը... ինձ թնչ հարկաւուր է... թէ չէիր հա-նում, չէիր ուզի... ասուց Քեթեանը բոլորովին կոս-րուած...


— Հանաք իմ անում լաւ... խիստ շատ զիդիս ասեփար, բաս արի մէ պաշ անիմ...

Եւ Սոլոմոն Պետրովիչը յարձակուելով Քեթեանի վրայ, այնպէս պինդ համբուրեց, որ առանձների հետքերը երկու ժամ չանցան կնոջ այսուրից:

\* \*

Սոլոմոն Պետրովիչը գնալով իւր խանութ, աչքի էր անցկացնում եկի մակց մատեաններն ան-կազմ ներս մտու Խոսի Մինչէրը:

1180.57



— Բարի լրւա. Աստծու բարին... ասաց Խային...:  
— Բարով իս էկի. . պատասխանեց Սօլօմօն Պետրովիչը մատեանները մի կողմ զնելով:

Գործակառաքը ըստ սովորութեան երկու ամիսով դուրս տարաւ և գրեց խանութիւ առաջ, որտեղ և տեղաւորուեցան Սօլօմօնը և Խային:

— Տանըցիքը վնանց ին... Հարցըց բարեկամաբար Խային:

— Փառաք Աստծու... էս օր էլ Քեթեանի ժինիքը \*) մօդ էին էլի... կանգնել է գլւխս, թէ Կաստաքինին գիմնազիէն տար կօսէ... թող ոսելար սովորի կօսէ... իս էլ փիքը իմ անուամ տանիմ...

— Տօ... դուն էլ վուր կնդերանց խելքով կառավարուելը չթողիս,—առաքէց Խային.— Ի՞քայ աղքեկ է... հիմի էլ նրա շկուրա գնաւու վամխա է...:  
Ռուբրէն իս ուզում սովորեցնի, մէ օմքին բռնէ թող տանավարի սովորեցնէ... ամա թէ ինձ կու Հարցին... աղքէր իս առանց գրան էլ զարու իմ...  
— Լաւ. ուժը կանչիմ...

— Ում կանչիմ... Սարգսին:

— Ի՞նչ Սացգիս տօ...  
— Միր օգորմած հոգի գործար Ստէպիկի տղին.  
Խուսեթիմէն հիմի է էկի. լաւ ուսում առած է...  
էս սահամիս էլ ոսի շկուէսումը ուշխալութին է անուսւ:

— Գանա նրա վուրթին էտէնց առաջ է գնանցի,  
Հարցըց Սօլօմօնը զարմացած:  
— Բաս ինչէլ հիմի չէիր զիութ:

\*) Ժինիք, վեց-կեսք

— Բաս վուր էտէնց է, իս նրան կուտեսնիմ, ասաց Սօլօմօնը մի առանձին բաւականութեամբ.  
Խայի Մինէիչը 38 տարեկան ամութե, հարուստ վաճառական էր և Սօլօմօն Պետրովիչը ամենամօտիկ ընկերը: Կատարինէի աւարտելուց յետոյ, Խային խնդրել էր Սօլօմօնից իւր աղջկայ ձեռքը և վերջինն ես առանց Քեթեանին ասելու և Հարցնելու տուել էր իւր համաձայնութիւնը:

Միայն Սօլօմօն Պետրովիչը մի տարի ժամանակ էր խնդրել, պատճառաբանելով, որ իւր աղջկելը դեռ շատ փոքը է և ուրիշ որդի էլ չունենալով, այդպէս շուտ չին կամենում բաժանուել նրանից:

Նոյն օրը երեկոյիան Սօլօմօն Պետրովիչը այցելեց Սարգսին, ի լատանեց իւր միտքը և խնդրեց Սարգսից, որ ամեն օր, որ ժամին կամենում է, զայ իւր առան իւր աղջկայ հետ պարապելու. Պայմանի գորութեամբ, Սարգսը ամեն օր, երեկոյիան 5 ժամից պէտք է պարապէս Կատարինէի հետ, որի համար Սօլօմօն Պետրովիչը պարտադրում էր տալ ամսական 50 ըուրպէ:

Սարգսը բուն թիֆլանեցի մի հասարակ ատաշագործի որդի էր: Հալքը թէկն մէծ աշխատանք չունէր, բայց եղածը այնպէս խնակողաբար էր ծախսում, որ ոչ ինքն էր անդրամ մնում և ոչ ընտանիքն էր զժգոհ իւր ապրուստից: Նրա միակ և անդրանիկ որդին Սարգսն էր, որն ևս իւր հօր կենդանութեան ժամանակ ուսանում էր իւր ժամանակին լայտնի Կարապետ վարժապետի ուսում-

նարանում, Հօք մահեց յետոյ, Սարգիսը, բարեկամ՝ ների միջնորդութեամբ և ռազմութեամբ կարողացաւ մտնել ոռուսաց գիշեազիսը, որտեղ և յաջողութեամբ աւարտելով, գնայ Ռուսիա:

Երեք տարի համալսարանական դասընթացներ անուագիս, կերպով վերադարձաւ հայրենիք:

Վերադաւանալուց անժիշտէս յետոյ, ուսումնարաններց մինում 700 բուրժի ոռջիով ուսուցչի պաշտօն ստայաւ և այդ փողով նա կառավարուում էր իր պատու մօք հետո:

Ահա այս է Սարգսի համառօտ պատմութիւնը:

## Ե.

Կատավինչն առողջակազմ և գեղեցիկ աղջեկ էր. Նրա բարձր և նույը հասակը, նազուք մէջքը, կորսեակ մէջ սեղմուած փափուկ և կուսական կործքը միանալով նրա դէմքի կանոնաւու գծագրութեան. հետ, բաւական վայելուց և գրաւեւ արտայաւառներն էն տավիս Թանձր և սե կամարակառ յոնքերի տակեց վառուազ նրա խոշոր և կրակով լի աշքերը և սիրաճէծ քայլուածքը մի առանձին զիւթիւն ներգործութիւն էն անում նայող վե վրայ. Մի խօսքով, որքան և գեղեցիկ էս նա այնքան նազեկ և սիրելի էր....

Նա բաւական եռանդով էր պարապում իր դասութը, այնպէս որ կարճ ժամանակում ոչ միայն կորողանում էր ազատ կերպով խօսիլ առուսերէնը՝ այլ և ֆրանսերէնի մէջ անգամ, սրինքն էր խնդրել պարապելու, մէծ առաջադիմութիւն ցոյց տուեց.

Նա ազատ թարգմանում էր «Margot»-ի բթացնող պարագրաֆները, նա հեղտութեամբ հոլովում էր գոյական և ածական անունները և շատ անգամ կարողանում էր իւր միտքը արտայալտել ֆրանսերէն. Նա այնքան սիրեց և յափշտակուեց այդ լեզուով, որ երբ Սարգսը լոգուած թեւաղթելու համար, բերել էր իւր հետ «Narratione» ը թախանձեց իւր ուսուցչին, որ այդ գասագրով պարապէ, օրովհետեւ «Margot»-ը վերջացրել է և բոլորը գիտէ:

Ուսուցչը տեսնելով իւր աշակերտուհու այդ օրինակ ջանասիրութիւնը և առաջադիմութիւնը, շատ գոհ էր և այս մասին գրեթէ միշտ խօսում էր ծնողների հետ:

—Քիզ էնցուր պահ տուի աղջկաս վուր լաւ սովորենիս, Խս Աստծեմէն ումիկ ունիմ, վուր աղջեկս էլ լաւ սովորի: Ասա ինչը... էնցուր վուր մէ գլուխ գոլում է քեզ, նա էնչնց է կոսէ, էնչնց է կոսէ, երանի հայուց շկոլութք քրա պէս ուշխտիք ըլէին կոսէ, Խս շատ բարաթ բարաթ ինքնիր կուսովըէ: կոսէ... Խս կմ կարճ ենթքով էնքանը գեղեցի՞ վուր, իփօր աշկերտը իր ուստին հաւնեցաւ, էլ փիքը չունէ... Խս ամեն բանին էլ վրայ կուննգնի ու զիփ էլ կուսովը... Համա իփօր աշկերտը իր ուստին շհաւնեցաւ ու մասխարա զցից... էնչտիւր էլը ցրիսեմէն հանէ... Դուն ասլիթո վուր վունչիք: ի սովոր ու էլածն էլ գլխին կու խոռով կիհայ ու մտքէմէն կուննգնի,—իւր յայտնած մտքերին մի տառնձին նշանակումիւն տալով, ասում էր Սոլոմոն Պիտովիք:

Սարգսը, շնորհիւ իւր համեստութեան և գործ

գրած եռանդի, Կատարելնէի ծնողներից մէջ յարգանք էր վայելում. Սօլոմոն Պետրովիչը իւր որդու պէս սիրում էր նշան և շատ անգամ էլ սաստում էր իւր կնոջը, որ չլինի թէ որ և է կերպով վշտացնէ այնպիսի «հայու հոգու» որպիսին Սարգիսն էց:

Նա համոզուած էր, որ Սարգիսը «հայու հոգու» է և այդ էր պատճառը, որ իւր բերանի խօսքը միշտ այն էր, որ ինքը «ժուայ է գնացէ իր աղջու»: Դասը սկսում էր երեկոյեան հինգ ժամից և տևում էր մինչև եօթը, և այդ երկու ժամուան ընթացքում Սօլոմոն Պետրովիչի հրամանով ոչ ոք իրաւոնք չունէր ներս մտնելու զահլիճը, ուր պարագում էին նրանք, բացի ծառապեց, այն ևս զանգահարելուց յետոյ. Նա վախենում էր, թէ մի գուցէ ոքինինի ներկայութիւնը նրան վշտացնէ և այն համոզմունքի գայ, որ իրեն չեն հաւատում:

Դասը վերջանալուց անմիջապէս յետոյ, Կատարելնէն առաջնորդում էր Սարգիսն դէպի սեղանատուն, ուզ Քեթեանը նստած սոճուրի մօտ, սպասու՞ն էր նրանց:

Խանութը փակելուց մէկ ժամ աւաշ, Սօլոմոն Պետրովիչը կերթար խանութ օրուան հաշիներին նայելու և լսկոյն տուն կը վերադառնար: Թէ խըմելու ժամանակ, Սարգիսը պատժում էր նրանց զանազան նորութիւններ և յայտնում էր Սօլոմոն Պետրովիչին վաճառականութեան վերաբերեալ հեռագիրների և յօդուածների բովանդակութիւնները, եթէ այն օրը կարդացել էր լրագրներում: Եւ զըրանով աւելի համակրութիւն էր վայելում նրանցից: — Հայ գիդի հա... հիմի կենդանի պիտի ըլէր քու

օգօրմած հոգի հերթ, վուր տեսնէր, թէ լինչ է դառի իր վուրթին... գլուխը շարժելով ասում էր Սօլոմոն Պետրովիչը, երբ Սարգիսը իւր յատանած նորութիւններով կարողանում էր զարմացնել նրան:

Անցել էր մէկ տարի և Կատարելնէն բաւական առաջագիմել էր թէ ուստիրէն և թէ ֆշանսերէն եղուի մէջ...

— Գու արած լաւութինը մտէս չի ննդնի. իս ումիկ ունիմ, վուր հօրէսի դէնն էլ լաւ մտիկ կուտաս ազգկատ...:

Նոյն առաջանան մայիսին, Սօլոմոն Պետրովիչը իւր ընկեր Խաչի Մինէիչի հետ, վաճառականական գործերով զնաց Մակուտա

Q.

Սօլոմոն Պետրովիչը Մօսկուա գնալուց յետոյ, նրա լնտանեկան կեանքը բաւական վոխուեցաւ:

Այժմ ամեն իրաւոնք կենդրոնացած էր, Քեթեանի ձեռքը, ինչուէս կամքենում էր, այնպէս և կատարած էր: Այժմ չկար Սօլոմոն Պետրովիչը, որ արգելէր նշան իւրեն անհաճոյ ձեռնարկութիւնները, փոփոխութիւնները նկատում էին ամեն քայլի մէջ, թէ կերակունեսի, թէ հագուստի և թէ իրենց կեանքի մէջ:

Սօլոմոն Պետրովիչը շատ՝ հակառակ էր, զուարհութեան և հասարակական սեղեր յաճախելուն, և ինքը փորձով տեսնէ էր նրանց անբարուականացնոյ ազգեցութիւնը:

— Մեր խաչիսին կլուր, ան թէտոր, ան տերկ

գնալը չե սազ գայ...: Միբ աղչկերանց էտթաւուր տեղիք տանիւ չի ըլի, էնզուր վուր խալսար ին ըլում, ու ուշկ ու ծիտքը սատաներու կրնէն է պցում: Սինք աղարով ու նամուսով խալխ ինք, Փեթէ ան ջան, միբ մէջ ճոշք ու զրեցք է դառնում... Համա ուրիշ խալխի համա սովորաւակ է. նրանց համա ուրի մէկ է: Կնեազն ու կնէնէն վուր մէտի շեղայ չմին նրանց բանը չի ըլի... նրանք նամուսի համա էնքան փեթը չին անում, լինչքան յաւ ուտիւ խմէլու վրէն, ան սազուրազի վրէն... ասում էր Սօլօժօն Պէտրովիքը, եթբ կինը ստիւրում էր նրան կրուր տանեւու Բայց տիյ բաները բոլորը անցել էին...: Ամրոջ տարուան մէջ, լինչը անկատար ցանչովթիններ ունէր, սկսեց հերթով իրագութել...: Սկսած ընտանեկան ամենաշնչին բաներեց, մինչեւ հասաւական և զուարձութեան տեղեր յաճախելը:

Ամուսնու գնալուց յետոյ, մի օր մի անձանօթ մարդ ներկայացաւ Քեթեանին և խնդրեց գնելու իրենից քանի մի տոմսակ, առաջիկայ ներկայացնան համար, որ տեղի պիտի ունենար կիբակի գիշեր «Սիմէնի այգում» մի չքաւոր ընտանիքի օգտին: Քեթեանը ուշախութեամբ գնեց Յ տոմսակ և վճարելով Յ ըուբլի, Ճանաւարչ ձգեց անձանօթ մորգուն:

Նոյն օրը երեկոյեան, երբ Սարգիսը արգէն լիթ շացընէ էր իւր դասերը, Քեթեանը խնդրեց նրան, որ ինքն եռ շնորհ ըերէ թատրոն որովհետեւ նա արտէն գնել է մի աւելուշ տոմսակ:

Սարգիսը ուրախութեամբ ընդունեց և որոշեալ ժամանակ նրանք գնային:

Այն գիշերը ներկայացումից յետոյ, պիտի պար ևս մինչեր...

Սարգիսը աւելի յաշմար զատեց սարելու Կատարինէի հետ, քան մի ուրիշ օրերդի խնդրելու. նա յայտնեց մօշը, որ թոյլ տայ Կատարինէին իրեն հետ պարելու:

— Գանա հարցնում ի՞ն... զանա իմ ախ չի՛ւ քիզ թողած ում հիգ կու թողնիմ, վուր տանցէվատ անէ... Կատարինէ, վուրթի, գիմեց նա իւր աղջը-կան—զուզմի տանցէվատ անիւ...:

Նա ծինալից և կտրմթիլով շարժեց գլուխը... և նշան համաձայնընթեան...:

Պարի ժամանակ, Սարգիսը որտեղից որ էր զատ երկու աթոռ և իւր թաշկինակով կապելով այդ աթոռները, առաջարկեց իւր թեր Կատարինէն, վերջինս կարմթելով ընդունեց և ելկուսն ի միսակն թե թեր տուած անցան բազմութեան միջից և բոնելին իրենց աեզը:

Սկսուեց պարը:

Կատարինէն միզրում, ամաչկոտութիւնից թոյլ և անսիրտ էր պարում... բայց վերջում նա տաքացաւ... մուզիկի ձայնը և իւր ուսուցչի կոմպլիմենտները, որոնց առաջին անգամն էր տեսնում, էլքուրացը Կատարինէն ...:

Քեթեանին շատ զիւր էր զալիս իւր՝ աղջկայ պարելը:

— Զարդար տանէ քեթեանը, աղուն սկ ջան... ասուն էր մաքումը, երբ նրա աւջիկը ուրախ և թեթե թուքներով վալս էր պարում:

Քեթեանը առաջին անգամ տեսնելով իւր ակջը-

կայ չորհեւ, չափազանց ուրախ էր և գոհ։

Գիշերուան ուշ ժամին, տոմինաքաղցր տպաւութեան սամկ նըանք վերադարձան առւն...

Կատարինէն ուրախութիւնից կորցրել էր իրեն։ Հետեւեալ օրուանից իսկ, նկատելի եղաւ, որ Կատարինէն արդէն փոխուել է... ուշք ու միտքը գըրաւել էր այն պարտհանդէսը... Նա այլ ևս եռանդով չէր պարապում։

Առաջին անգամ, այնպիսի փակ կեանքից յետոյ, Կատարինէն հասարակական շրջանի մէջ ընդէլով, միանգամայն լնչակս ասում էն, բացուեցան նրա աչք'ը։ Անփորձ օրիորդի վրայ պաւաս անդէսը մնած ներգործութիւն ունեցաւ։ Նա տեսաւ այնտեղ այն, որ գեռ ևս տեսած չէր՝ ամենասփանչելի և վերջին մօղայով կարած հագուստներով իրեն հասակակեց օրիոցդներ... բայցմաթիւ ըստ երկութիւն, քաղաքավայի երիտասարդներ, որոնց հազար ու մէկ կօմպլիմենտներ և հաճոյախօսութիւնները մէծ ներգործութիւն էին ունեցել իւր վրայ ... Նա կեանքի վայելչութեան համն առնելով, զնահատեց ադատութեան նշանակութիւնը..., նա տեսաւ, որ իւր հասակակեց օրիորդները, ոչ ոքից կախում չունենալով, ինչ ուրախութեան մէջ էին։ Նա համեմատեց իւր գրութիւնը նըանց գրութեան հետ և գըտաւ, որ նըանցը աւելի լաւէ քան իրենը—«Նըանք ոչ զաս ունին սովորելու և ոչ ուսուցչի կծու յանդիմանութիւն և նկատողութիւն լսելու կարիք... նըանք վայելում էն կատարեալ ազատութիւն», ասում էր նա և նախանձում։

Նա տեսեւ էր թէ լնչակս իւր ուսուցչին հասա-

կակեց երիտասարդները խմբուած, գուցէ իրենից սաոր օրիորդի շուրջը, գրաւում, պատում էին նրան և առաջարկում իրենց ծառայութիւնն ամեն քայլափոխում։ Այն լնչ ինքն, ստրկացած այդ տեսակ երիտասարդներից մինի առաջ ... ոչ միայն չէ կարողանում ազատաբար խօսիլ նրա առաջ .. այլ և չէ համարձակում պարելու նըա հետ, մինչև անգամ այն ժամանակից երբ ինքն ուսուցիչը առաջարկում է այդ, Նա ի նկատի ունենալով իւր տարիքը և հասակը և համեմատելով իրեն ընկերուցների հետ, այն եզրակացութեան էր գալիս, որ այժմ վայել չէր իրեն աշակերտութիւն անելու, քանի որ իւր գլուցական ընկերուցներից շատերը լնչակս պարահանդէսի գիշերը տեսել էր, ազատ էին և ամուսնացած...

Նըանք իշխում էին իրենց և կառավարում էին իրենց խելքով և հասկացողութեամբ...։

Եւ փոքր առ փոքր Կատարինէն իւր մտածմունքներով շատ հեռուներն էր գնում...։

Այս ամենից յետոյ, նա Սարգսի վրայ այլ ևս այնպիս չէր նայում, լնչակս առաջ։ Նա փոխեց իւր գիրքը և յարաբերութիւնը։

Սարգիսն ևս նկատում էր այդ փոփոխութիւնը... նա պարզ անսում էր, որ իրենց պաշտօնական յաւաբերութիւնը փոխուել է և մի ինչ-որ ուրիշ բանն էր նմանում։

Բայց ինչ էր այդ ուրիշ բանը—նա կամ շգփուէր և չէր հասկանում և կամ գիտէր և չէր կամենում հասկանալ։

Երկրորդն աւելի հաւանական էր.

Է.

Որ Կատարինէն փոխուած էր, որա դէմ հակառակել չէր կարելի: Կատարինէն արտաքին ձեւը ըստ շարժուածքները վկայում էին, որ նա արդէն թօթափիւ է իւղ վրայից աշտկերտական փոշին, Սարգիս իւր նորիկին բաշճը հեղենակութեածքոչնշացել էր նըր տուած: Նա Սարգսի հետ խօսում էր, վիճում էր և մինչեւ իսկ ծիծաղում էր նըր երեսին. մի խօսքով Սարգսին նա ընդունում էր ոչ թէ իրեւ ուսուցիչ, ույլ իրեւ մի երիտասարդ, որին յարգելով կարելի էր հետը քաղցրախօսութիւն անել, պարել և երբեմն ևս հանաքներ անել....

Սարգսին էլ ոկարհերում չափազանց յարգում էր օրիորդին, իսկ վերջը տեսնելով նըր գեղեցիկ և մինոյն ժամանակ քաղցր բնաւորութիւնը, վճռել էր ապազայում ինդիւլու նըր ձեռքը: Նա իւր մտադրութիւնը յետաձգում էր և սպասում էր մեր յարմար ժամանակի: Նոր այն երիտասարդներից չէր, որ յափշտակուլով կնոջ գեղեցիութիւնեց, աշխատիչ օր առաջ խելքեց հանել մի օրիօրդի, որ գեռ ևս անպատճառ էր իւրացնելու սիրոյ քաղցր զգացմունքները: Նա տեսնում էր, որ իւր աշակերտուհին գեռ խաղաղ է և կանգնած է իւր նպատակի վրագոյն ծման ճանապարհի վրայ... Նա չէր կամենում վրգովել նըր խաղաղութիւնը և աւելին այն սիրտը, որ մի ժամանակ բնական ճանապարհով տէտք է սէր շնչէլու և սիրոյ զգացմունքների տակ բարախէր... նա յուղ անէր և սպասում էր....

Վերջերում Կատարինէն վրայ փոխուածքիւն նըր կատելով, նա սկսեց կասկածել: Նըրան թուամ էր, որ ժամանակ է և այդ էր պատճառը, որ այժմ ուրախութեամբ տանում էր ի ը աշակերտուհու հանագները. . աննպատակ է օսակցութեմները և այն քաշցը ժամաները, որոնք վկային առաջ:

Պարապմոնքներն աժմն բուզովին այլ կերպարանք էին ստացել: Ժամեւն անցնում էին ժամանակը խօսակցութեամբ: Սարգիսը իւր զանազան պատմութիւններով և իւր համալրուանական կեանքի նըր կարագրութիւններով աշխատում էր գրաւել օրիորդի ուշագրութիւնը: Կիրակի և տօն օրերը պարապմունքներ չէին լինում և այս հանգամանքը վերջերում բաւական վաստ աղդեցութիւն էին անում Կատարինէն վրայ: Նա վերջապէս ինքը եց, որ կիրակի օյնեն ևս շարունակէ «դաստութիւնը», մեծիան առաւտեան 9 ժամից, որովհետեւ կիրակի երեկոները առհասպարակ նըրանց տանը հիւրեր էին յինուում:

Սուրբիսն ուրախութեամբ յանձն տուաւ և այդպիսով ամեն օր տեսակցուելով աւելի և աւելի մօտենում էին երարք....

Եւ Կատարինէն մէջ աննշամարելի կերպով, առաջանալով այն սրբազն կրակը, որ սէր է անուանում, որ աւուր անում և բոսրոքում էր....

---

Յուրիսեան կեսակիներեց ըինն էր: Որոշեալ ժամին Սարգիսը այցելեց իւր աշակերտուհուն և պատմունքը կամ, աւելի լաւ է ասել, մասնաւոր

Խօսակցութիւնները վերջացնելուց յէտոյ՝ պատրաստուեց գնալ. սակայն, Քիթե անը թափանձեց, ու Ճաշին մնայ իրենց մօտ և ընկերանայ իւր եղբօքը, որովհետև Սօլօմօն Պէտրովիլը բացակայ է:

Այս առաջին անգամն էր, որ Սարգիսը ճաշին պիտի մնար նըանց տանը. նա համաձայնեց,

Գիգօլին (Քիթե անի եղբայրը) գորեցի վաճառական էր և նոր էր եկել Թիֆլիս իւր մասնաւոր գործերով. Նա իջեանելու տեղ չունենալով, իջել էր իւր քրոջ մօտ. Նա շատ ուրախ և պարզախօս ու հանաքնիք սիրող մարդ էր. Նրա հաստ և կլոր փոքր վկայում էր որ Բագոսի երկրպագուներից պիտի լինէր.

Ճաշը բաւական ուրախ էր անցնում. Գիգօլին անընդհատ երգում էր, ծիծաղում էր և հանաքներ էր անում, որ բաւական զուարձացնում էր փոքրիկ ընկերութեանը. Նա երբեմն այնպիսի նիւթերի վրայ էր խօսում, որ վայել չէր սեղանին, բայց Քիթե անը իմանալով իւր եղբօք բնաւորութիւնը, չէր խօսում.

Կախեթի գլնու շնորհիւ Սարգիսն և ս բացուել էր. նա մինչև անգամ երգեց և երգն աչնքան դիւր եկաւ Գիգօլուն, որ աչ միայն նրա կենացը խմեց՝ երկու բաժակ իրար յետելոց կօնծելով, այլ և վերկենալով տեղից, համբուրեց Ալրգսի ճակաար.

Քիթե անը ծիծաղեց. իսկ Կատարինէն աչքի տա՛յով նայեց Սարգիսն, կարծես կամենում լինէր իմանալ նրա տրամադրութիւնը. Սարգիս և Կատարինէն հայեացքները պատահեցին իրար և Կատար սենէն կարծելով խոնարհեցրեց իւր աչքերը:

Սարգիսը խնդրեց Կատարինէն երգել, նա չ'մերժեց:

Կատարինէն ձայնը քաղցր, գուրալի և գրաւիչ էր. Սարգիսն առաջին անգամն էր լսում իւր աշակերտուհու հրեշտակալին ձայնը նա բերանը բաց նայում էր նրան, որ այդ տապէն նրա գէմքը այնքան գեղեցիկ և թովիչ արտայայտութիւն էր ստացել, որ իթէ Սարգիսը, չնայելով գինու ազգեցութեանը, իրեն չգտնէր, գուցէ յարձակուէր իւր աշակերտուհու վրայ ու համբուրէր այն այտերը, որոնք ամաչկուտութիւնից վարդի գոյն էին ստացել:

Ճաշից յետոյ, Գիգօլին բարձրանալով թախտը, ձգուեց երկար ու բարակ եւ «Հոռվաշո՞ն» հասելով, ընկաւ Մորթիսոսի գերկը:

Սարգիսը մտնելով զահլիճ, նստեց թիկնաթոռի վրայ եւ ծխել սկսելով, թերթում էր իւր առաջ դրուած ալբոմը:

Մի փոքր ժամանակից յետոյ ներս մտաւ Կատարինէն, բերելով իւր հետ մի արկդ քաղցրաւէնիք. Նա առաջարկեց Սարգիսն վերցնելու նրանից:

— Քուք միանդամայն պարտաւորեցնում էք ինձ, օրիորդ, ասաց Սարգիսը վերցնելով միայն մի հատ:

— Ինչու այդքան քիչ... վերցրէք լինդրեմ, ասաց ժամանակը Կատարինէն:

Ո՛չ, չնորհակալ եմ. սկսոք է ասած, որ ես քաղցրեցիններ չեմ սիրում. բայց ձեզ համար, ոչ թէ քաղցրեղին, այլ իթէ զառն բան անգամ առաջակերու լինէք, ես պատրաստ եմ ընդունելու, ասաց Սարգիսը մի առանձին ոգեստութեամբ, որին օգնում էր և ներքուստ և գինին:

— Արդգան զոհողութիւն...

— Կասկածում էք ողբորդ, ասաց Սարգիսը մի հաշտական հայեացք ձգելով օրինորդի վրայ, որ այդ ժամանակ նստել էր նրա դիմացը:

Ես համոզուած եմ, որ զուք ոչ մի գէպքում չէք համաձայնուիլ ոք մինից զառնութիւն ընդունելու, պատասխանեց Կատարինէն,

— Բայց գուք, օջիորդ, այդ ու քննեքց բացառութիւն էք կազմում,

— Ինչու...

— Չեզ արդէն յայտնի է պատճառը:

— Ինձ ուինչ յայտնի չէ, զուք ինչից էք եզրակացնում այդ:

— Չեք ցոյց տուած յարգանքից:

— Բայց այդ ոչինչ նշանակութիւն չունի, քանի որ ամեն ծարդու համար իւր կեանքը քաղցր է և չփ կամենալ զառնութիւն ճաշակել:

— Նայելով իմ ներկայ դրութեանը, ինձ համար այդպէս չէ:

— Կը նշանակէ դուք բացառութիւն էք կամենում կազմել...

— Այս:

— Պատճառը.

— Ուսովհետեւ կեանք ի՞ն չէ:

— Ի՞նչ է նշանակում այդ... ի՞նչպէս թէ ձերը չէ. Հասցենց Կատարինէն զարմանալով:

— Դուք զարմանում էք:

— Եւ զարմանալի չտ...

— Ոչ այնքան, որքան դուք կարծում էք:

— Պարզեցէք ձեր այդ նոր գիւտը....

— Դա նոր գիւտ չէ... այլ յայտնի մի ճշմարտութիւն...

— Ուրեմն ձեր կեանքը պատկանում է ուրիշին և այդ մի յայտնի ճշմարտութիւն է, ամփոփեց Կատարինէն:

— Այս:

— Բայց կարելի՞ է իմանալ, թէ ումն է ուասիկանում ձեր կեանքը, հետաքրքրուեց Կատարինէն:

— Ես զարմանում եմ, որ հարցնում էք այն, ինչ որ վաղոց պիտի ի՞նմայիք... միթէ չգիտէք, որ իմ կեանքը ձերն է... ասաց Սարգիսը մօտեցնելով իւր աթոռը Կատարինէն:

— Ինչպէս, հարցըեց Կատարինէն կը կնաւալաստկելով իւր զարմանքը:

— Կատարինէն, միթէ քեզանից ծածուկ է այն սէքը, որ տածում էի գէպի քեզ մինչև այսօր, Եթէ ծածուկ է, ահա յայտնում եմ քեզ այժմ։ Բայց ես գիտեմ, որ ծածուկ չէր և այդ վկացում էր քո գէպի ինձ ունեցած չափազանց յարգանքը և անկեզծ պարզութիւնը։ Գուցէ գու զարմանում ես, բերանիցն լսելով այս խոստովանութիւնը, բայց ոչ, մի զարմանաւ։ Ես քեզ այն ժամանակուանից սիրեցի, երբ առաջին անգամ տեսնուեցայ քեզ հետ... և այն օրից ահա անցել է մի ամբողջ տարի, և այս ժամանակամիջոցում աւելի վառուել և աճել է սէրս... Կատարինէն, գու իմ մտածութեան և ուրախութեան առարկան ես եղել... ես ապրել եմ քո լուսով և ես գիտէի, որ գու իմը պիտի լինիս... Ես մի յարմար զէպիք էի սպասում, որ կարողանայի յայտնել սէրս և խնդրել փոխարինը...

Սարգիսը մի փոքր կանգ առաւ և տպա բոհերլ նրա ձեռքերը, մօտեցվեց իւր շրջունքներին և սկսեց համբուղել:

—Կատարինէ՛, շարունակեց նա, —զո՞ւ ևս սկզնու՞ն ի՞նձ... բայց դու չես խօսում... երեւ զու արհամարհում ես ինձ...

Կատարինէ՛ չէր խօսում, նա կախել էր գլուխը և կարծես մի բանի վրայ մտածում լինէր:

—Կատարինէ՛, միայն մի խօսք... ասա, որ դու ի՞նձ սիրում ես..., և ամեն բան կը վերջանայ... Ասու, ասա հոգիս, խօսիք, միայն մի բառ...

Կատարինէ՛ բաշրմացնելով գլուխը մի այնպիսի հայեցք ձգեց Սարգսի վրայ, որի մէջ կար ամեն բան, և՝ քնչութիւն, և՝ կուսական ամօթխածութիւն, և՝ սէց, և՝ չերժ զգացմունք:

—Սիրելի՞ս... շշնչաց նա և սկսեց ամբողջ մարմնով գոզալ...

—Ուրեմն դու ի՞նձ սիրում ես. ազադակեց ուրախութիւնից Սարգիսը և գրկելով նրան՝ համբուրեց նրա աչքերը, ճակատը, վարդագոյն այտերը և մալերը... . . .

Նրանք երկար ժամանակ մնացին այդ գրութեան մէջ:

—Բաւական է... մեզ... մարս կառող է անօնել շշնչաց Կատարինէ՛ և գուքս սոզաց նրա գրկեց:

Այդ օրուանից անցաւ մի ամբողջ ամիս, այնպէս ենցան երջանկութեան մի սքանչելի վայրկեան:

Ը.

Սոլոմոն Պետրովիչը Մուկուտ գնալով, սկսեց կը առեւտրական գործերը: Նա իւր խանութների համար բաւականաչափ ապրանք գնելով, ճանապարհեց Թիֆլիս՝ ուղարկելով նաև մանրամասն տեղեկութիւններ թէ աշբանքի գների և թէ տուի արք տրամադրութեան մասին: Իւր վերջին նամակով նա յայտնել էր, որ օգոստոսի սկզբներին գնալու է Նիժնի-Նովգորոդ և ուրեմն կ'սալասէ բամբակի հակերին:

Ինչպէս որ գրել էր գործականարներին՝ օվոսուսի սկզբնեցին նա արգէն Նիժնից տօնավաճառութոցումն էր և անհամբեր սպասում էր բամբակի հակերին, որովհետեւ արգէն կարողացել էր ձեռնրտու պայմաններով գնողներ գտնել:

Քանի մի օր սպասելուց յետոյ, յանկարծ լուր տարածուեցաւ տօնավաճառանոցում, որ Վազգալի վրայ ալրուել է մի շոգենաւ իւր բոլոր ապրանքներով, որի մէջ մասը բամբակի է եղել՝ մօտառուակչո 20,000 ըսլբու արժողութեամբ: Սոլոմոն Պետրովիքը լեզապատառ ալս և այն կողմն լնինելով տեղեկացաւ, որ բամբակը իրենն է եղել. նա բաշրմացնելով իւր երկու ձեռքը, մի հառաջանք արձակեց և գլուխը ծեծելով սկսեց երեխայի նման լաց լինել:

Նա այդ բամբակի վրայ էր գրել իւր լոյսը և քանի քանի ծրագիրներ պիտի իւրագործուէին այդ փողով:

Մուկուտ գնած ապրանքների մէջ մասը ա-

պատիկ էր և նա պիտի վճարէր այդ փողեց... բաւականաշափ պարտքի մուրհակներ պէտք է ազատուէր այդ փողով. Եւ վերջառէս այդ 20,000 ըուբլին պիտի ամրացնէր նրա վաշկը և հաւատարժութիւնը.

Նա գուցէ ներագարուէր այդ անակնկալ հարուածի աղլեցութիւնից, բայց Խամի Մինէեւը սիրտ առեց և կարողացաւ առնել նրա սիրտը.

— Տո՛... Ինչ էլաւ քիզ... տնաշխն, քիչ ունի՞ս Միթ գուրծունը էտթաւուք բան քիչ է պատահում... գանա միտու չէ, վուր քարվալումը պահած 1,500 թուրմնի թամբաքուս Քոի մինձանալու փուխուը բաթմիշ էլաւ... \*) Հիմի իս գնացել էի ջուրն էի ննգի էլւ...

— Ախար չիս գիզի է... պատասխանեց Սօլոմոն Պետրովիշը. — միւզիս քեսատ վուխտն է... հիմի էլ ով է քաղքեմէն փուզ բերել տալի... իմ կնիկ Քեթեանը վուր իմանայ, ով գիտէ զամրւայ \*\*) ննզնի.

— Վունչիչ չի ըմբ... էլածն էլած է... տօ, ինչ պիտի տանիս էս աշխոքեմէն, ան ինչի՞ պիտի դարդ անինք... զու չանսաղութիւն ասա, թէ չէ, էլի կու դաղուե էս փուզը Դուն միթ բանի վեն խօսի, նշանտուէք վճնեց ինք անում...

— Տո՛, ըալքոս \*\*\*) նշանտուէք է... դարդեմէն տուաքում իմ... ան վուրդի է փուզիր...

Տօ՛, քիզմէն փուզ ով է ուզում: Հազար թու-

ման ձիս խոստացի ախակէր, իփօր ուզում իս էն չախը տու, Գանա միթ բարեկմութիւնը փուզով պիտի ըլի...

— Էտ խօմ էտէնց է... ամա Մօսկով փուզ պտէի որգի է...

— Հէր օխնած ինչքան ուզումիս տար էլի. իմն ու քոնը ո՞վ է բաժնի... գանա քիզ վրէն փուզ կու կորչի, — բոլորովին անկեղծութեամբ ասաց Խալին, հաւատացած լինելով, որ Սօլոմոն Պետրովիշը համաց 20,000 ըուրին այն նշանակութիւնն ունի, ինչ օր ծովի համար մի կաթիւը, և վերջապէս լիշեց այն առածը թէ՝ «Ճին էնքան չի վերննգնի, վուր իշու հենչաք թիւն էլ շատնէ»:

Խփօր էտէնց է ախակէր, այս նշանը տու, Փառք Աստուն, աղջկան խօմ տեսիլ իս: Գուն խօմ գիւղիս վուր իմ աղջկը փուտը չունէ... լու հօր վուր: Թէ է ու ուսում տուած է... էլ թնչին իս մնում... էսահիվէս գութահ անինք \*) էլի: Խո հիմի ախակէր քիզ փուզ չիմ կանայ տայ էնդուր վուր, իս էլ փուզի կարօտ իմ... տեսնում իս Էլի... Ուզում իս շուրս ամիս ժամանակով հազար թուրմնի բարակ կուտամ. թէ ուգում իս վար ինձ բարեկամութիւն էլ անիս ախակէր, մէ հազար թուրման էլ տու, նրգիք Մօսկով, թող էնդի նիսիէքը \*\*) սրփուի... մէկ էլ քաղքեմէն շբերել տառ, կուշանայ...

— Վէքսիլով ինչքան գուզիս տար, ինսքը կըտրեց Խալին.

\*) Ունչացաւ

\*\*) Կաթուածահար

\*\*\*) Ի՞նչ ժամանակ

\*) Վերջացնենք

\*\*) Ապառիկները

— Հան... իս էլ էստ էլ զալվ... զիտիս թնչ է ախ-  
պէս... իս վէքսիւմէն չիմ փախչում, ամա իմ ասին  
էն է վուր վէքսիւ տամ, էրկու շալէմէն աւել շահ  
չիմ տայ, ասաց Սօլոմոն Պետրովիչը:

— Քիզմէն շահ ով է ուզում, վրայ թերեց Խային:  
— Վուր էտէնց է, բայ միը առողջութ պլծած է.

Խայի Մինէչը, Ենչպէս առաջ էլ մերէ էլ, 38  
տարեկան, ամուրի, հարուստ վաճառական էր: Սօ-  
լոմոնի ամենասիրեցեալ ընկերը, Այս երկու վաճա-  
կանները բոլորովին նման էին թէ իրենց առևտրա-  
կան հմտութեամբ և թէ բնաւորութեամբ: Նշանց  
հիտ խօսողը կը կարծէր, թէ երկուսի խելքն էլ մի  
գլւի մէջ է հաւաքուած, որովհետեւ ինչ որ Սօլո-  
մոն Պետրովիչը ասում էր, նոյնը կնքում էր և  
Խայի Մինէչը:

Երկուսի ձգտումն էլ մէկ էր, այն էր՝ ամեն մե-  
ջոց գոյց զնել հարստանալու համար: Սրանց մէջ  
եղած զանազանութիւնը միայն ճաշակի մէջ էր:  
Սօլոմոն Պետրովիչը սիրում էր թագա ձուկիւ ար-  
տալա, վրան էլ կախեթու գինի: Կոկ Խայի Մինէչը  
բաւ խաչ, զուրգիկ և խորլած սուկի, վրան էլ կախե-  
թու գինի: Նրանց մէջ ամեն գաղտնիք բաց էր...  
բացի հարստութեան գաղտնիքից:

Խայի Մինէչը կարծում էր, որ Սօլոմոնը իրենից  
աւելի հարուստ էր... և նա ամեն կերպով կամե-  
նում էր նրա հարստութիւնից օգտուել, բայց Սօլո-  
մոն Պետրովիչը այն մարդը չէր, որ զուր տեղը ու-  
րիշներին փող բաժանէր... Ուրեմն մի պատճառ

էր հարկաւոր, և նա գտել էր—ուզգակի ամուսնա-  
նալ նրա առջիալ հետո:

Ընդհակառակը, Սօլոմոն Պետրովիչը կարծելով,  
որ Խային իրենից հարուստ է, ցանկանում էր օգ-  
տուել, եթէ ոչ մշտական և ձրիաբար՝ այլ փոխա-  
րինաբար, այն էլ փոքր տոկոսով, և այս էր պատ-  
ճառը, որ նրան տալով իւր աղջիկը փեսակացըց:

Երկու օշից յետոյ, Սօլոմոն Պետրովիչը 10,000  
ռուբրի սահմալով, տուեց Խայի Մինէչին 20,000  
ռուբրու պարտածուրհակ, հետո հաշուած նաև աղ-  
ջկայ 10,000 ռուբրի օժիար: Կոկ Խայի Մինէչը  
ցանձնելով նրան նշանի աղտամանդեայ մատանին,  
տուեց մի վաւերացւած պայմանաթուրզը որի զօ-  
րութեամբ նա պէտք է ծուրհակի մէջ յեշուած  
20,000 ռուբրուց, 10,000-ից ձեռք վերցնէր, եթէ  
իւր կողմից որ և է արգելք դրուէլ պասակագրութեան  
վերաբերմամբ:

Թի:

Քեթեանը իւր աղջկալ նշանադրութեան մա-  
սին ոչինչ տեղեկութիւն չունէր: Սօլոմոն Պետրովի-  
չը ոչ առաջ էր լայտնել իւր միտքը և ոչ այժմ էր  
հեռագրով տեղեկութիւն տուել:

Զգիտեմ օգոստոսի քանիսն էր բայց յեշում եմ,  
որ հետեւեալ օրը Վերափոխման տօնը պէտի լինէր:  
Նա այդ առաւօտ նստած իւր առանձնասինեա-  
կում, զրաշուած էր կարով... Նա յարմարեցնում

Էթ իւր շօրը միւս օքուան հանդէսի համար.

Յայնկարծ ներս մտաւ Տառան և տուեց մի թուղթ, յայտնելով, որ պօստային ցրուիչն է թերել.

Նա մտաւ իւր աղջկայ սենեալը, Կատարինէն, որ այդ ժամանակ զբաղուած էր ընթերցանութեամբ, բանալով թուղթը յայտնեց մօըը, որ պօստում իւր անունով 350 բուրլիսնոց ծրագ է ստացուած:

—Ելի իմանաս լինչ է խրգի հերդ, ասայ Քեթեանը և առնելով թուղթը Կատարինէն ձեռքից, կանչեց ժառային և հրամայեց յայտնելու կառապանին, որ լճէ կառքը: Ինքը մտնելով իւր սենեակը հագնուեց և պօստ ուղեղորուեցաւ:

Մըարը գնի համապատասխան չէր, նա շատ փոքր էր և այնքան փոքր, որ սուանալուն պէս դրեց գրապանը և վերադարձաւ տուն:

Կատարինէն անհամբեր սպասում էր իւր մօըը. նա իսկոյն առաւ ծրաըը մօր ձեռքից և սկսեց զգուշութեամբ բանալ: Մի փոքրիկ արկդի մէջ, առանձին հոգատարութեամբ գրուած էին երկու արկդիկներ մինի մէջ գրուած էր մի գեղեցիկ աղամանդեայ մատանի, իսկ միւսի մէջ մի ոսկեալ ժամացոյց, ոսկեալ կարճ շղթալով և նըրաչին բանալով: Արկդիկների տակ գրուած էր նաև մի ծրաը:

Քեթեանը բացեց ծրաըը, դա իւր ամուսնու նամակն էր՝ վրացերէն գրած:

Մինչդեռ Կատարինէն հիանում էր այդ ոսկեդէն-նիր վրայ, Քեթեանը կարդում էր նամակը:

Ուօքմօն Պետրովիչը սովորական ողջոյններն և մաղթանքները գրելուց յետոյ, յայտնում էր, որ իւր

աղջիկ Կատարինէն կամենաշով բաղզաւորեցնել, նշանել է իրեն ծանօթ Խոայի Մինէիչի վրայ, որին և խոստացել է տալ 10,000 ըուրլի փող և բաւականաչափ օժիտութեամբ մատանին ևս տուել էր, ուստի ինքը ցանկանում է, որ իւր ոչի լուս Կատարինէն, իսկն քաշաք զարուց առաջ կը այդ մատանին և ուրիտանակ:

Իսկ ինչ վերաբերում է ոսկէ ժամացոյցին, ընծայել պարոն Աարգալին իւր աշխատանքի համար և իւր կողմից խնդրել, որ մինչև իւր քաղաք գալը, դարձեալ շարունակի իւր պարապմունքը:

Քեթեանը նամակը կարգալուց յետոյ մի կողմ ձգեց: Նա իւր մարական իշաւունքները ուսնակուարած էր տեսնում... նա բարկացաւ, որ իւր ամուսինն առանց իրեն հարցնելու գործ է տեսել...

—Ամա, հիմի էլ լինչ փայդայ... \*) ինչ որ արել իս արել իս է լի... .

—Արի մէ պաշ անիմ... գէնացվալոս \*\*) գէտէն, ասաց Քեթեանը և, գրկելով Կատարինէն, մատանին մատը դրեց: Գնա վուրթի, թող Աստուծ էլածն օխնէ ու մէ բարձի ծերանաք:

Քեթեանը սկսեց լաց լինել:

—Ինչ բան է մարմիկ... ինչի՞ ես լաց լինում, հարցրեց Կատարինէն, ոչինչ չհասկանալով:

—Ուրախութենէմէն մէրաշ լացս էկաւ վուրթի... քու հէրը միշ Խոայի Մինէիչի վրէն նշնի է քիզ... Խօմ ճանչնում իս Խոայի Մինէիչին.

\*) Օգուտ

\*\*) Քեզ մատադ

— Ինչու թէ նշանելէ... հաջողեց զարմացած  
Կատարինէն:

— Քիզ նրա հիդ նշնելէ էլիք, վորթի... այ, մատ-  
նիքն էլ խսդիլ է:

— Աստուած իմ... բացականչեց Կատարինէն և  
հանելով մատից նշանադրութեան մատանին և  
ձգեց թախտի վրաւ—Ես նրան դնացող չեմ, զուր  
է հայրս ալդ սխալը գործել...

Եւ Կատարինէն արտասուելով դուրս գնաց սե-  
նեակից...:

Դեռ այս օրու այս պահում այս անունը այս անունը  
\* \* \*

Հետեւեալ օրը Բէթղեհիմի սուրբ Աստուածածնայ  
տոնի ուխտը վնելով, այս երեկոյեան, ըստ Հնա-  
ւանդ սովորութեան, ուխտաւորների մէծ բազմու-  
թիւն էր հաւաքուած եկեղեցու մէջ և նրա բա-  
կում:

Հանդիսաւոր ժամասացութիւնից և նախատօնա-  
կեց յետոյ, ժամաւորները դուրս եկան եկեղեցու  
բակը, իսկ նորեկները մոմեր գնելով, մտնում էին  
եկեղեցի և արօթելուց յետոյ, դուրս գալով եկեղե-  
ցուց, խառնում էին բակում խռնուած բազմու-  
թեան հիւս Նկեղեցու դռները զերմեռանդ լաճա-  
խորդների համար բաց էր մինչև գեշերուան ուշ  
ժամը:

Նկեղեցու տաներքը, գմբէթի մի քանի մասերը  
և դրան առաջ գտնուած դէպի բակը տանող սան-  
դուղք վրայ լինուած արհեստական կամարը՝ լու-  
տաւուուած էին գոյնզգոյն լապտերներով, որոնք

տեսնողի առաջ ակնապարաս տեսալան էլն նէր-  
կայացնում:

Եկեղեցու բակում վասում էին լապտերները և  
ձիթալին ձբագներ, որոնց արձակած գորեզ լուսի  
տակ, կաշելի էր տեսնել ամեն զասակարգի մէծ  
մաշտիկ և թէ իներ:

Բակի մի կողմում հաւաքուած բաշմալու օ, ե-  
որդներ և կիներ սահմանել էին Վրաստանի հան-  
րածանօթ բայցնողաբան և հերթով պարում էին: Մի  
ուրեց տեղ մուզիկով պարում էին երիտասարդները:  
Շատ տեղ էլ խումբ խումբ զուարձասէր երիտա-  
սարդներ հաւաքուած՝ զանազան խեղկատակու-  
թիւններ, սրախօսութիւններ և հանաֆներ էին ա-  
նում՝ անց ու զարձ անող օբյուրդներին գրաւելու և  
ձիճագանելու համար:

Եկեղեցու երկու կողմը բացեպաշա պառաւ և  
հասակաւոր կիներ, որոնք «բարպահելու» մտքով էին  
եկել, ժամանակը սպանելու համար, բացել էին  
իբրեւնց բամբասանքների պարկերը, և էին գարմա-  
նը քամու էին տալիս:

Եկեղեցու շրջակաբում գտնուած տների տանիք-  
ները վրայ նստուած Թիֆլիսի գուարձասէր ունիւ-  
թիւնը քիֆ էին անում: Այդ տանիքներն ևս գար-  
դարուած էին գոյնզգոյն լապտերներով: Երբեմն  
հրախազութիւններ ևս լինում էին: Մինչև անգամ  
Գէմբչունց տանիքի վրայ նստած խումբը, հանգի-  
սականներին զարմացնելու համար, մի մեծ գեղե-  
ցեկ և լուսաւորուած օլապարեկ սաց լթողեց, որ  
բաւական ախորժելի տպաւորութիւն էր գործում  
նայողի վրայ:

Գլշերուան երկու ժամն էր:

Հանդիսականների մեծագոյն մասը ցըռւել էր...  
մացիւ էին միայն ուխտաւորները, ովոնք ևս ըս-  
կուել էին քնել:

Եկեղեցու բակում յուութիւն էր տիրում և երրեմն  
այդ լուութիւնը խանգարում էր շրջակայ տանիք-  
ների վրայ նստած խմբերի ուրախագին աղաղակ-  
ներից...

Եկեղեցու բակի մի անկիւնում, երկու հոգի նըս-  
տած լրելեայն խօսակցում էին:

—Ուրեմն, մատանին ևս ուղարկել է հայրդ.

—Ո՛չ միայն մատանին, այլ և մի ժամացոյց, որ  
մայրս տալու է քեզ, իրեւ աշխատանացդ վարձ.  
կ'ընդունե՞ս ժամացոյցը, այնպէս չէ հոգիս...

—Ե՞ս... կատարինք.. եւ դու կասկածում ես  
ինչ վրայ... դու կարծում ես, որ ես այնքան զատ  
կը լինեմ, որ յօժարութիմ վերցնել մի ժամացոյց, որ  
ընծալում է այն մարդը, որ իւր անձնական շահե-  
թի համար զոհւմ է իւր աղջկան, մի աղջկի՝ որի  
սիրու ուրիշին է պատկանում. Ո՛չ, կատարինք,  
իթէ մինչեւ անգամ դու, յափշտակուելով քո փե-  
սացուի հարստութիւնից, յօժարուիս կատարելու  
հօրդ կամքը և կրես նրա ուղարկած մատանին,  
դու հաւտատ իմանաս, որ այն ժամանակ ես չեմ  
ընդունելու այն ժամացոյցը... ես միայն անիծելու  
եմ այն օրը՝ երբ պատահեցի քեզ...

—Ո՛չ, մի ասիր այդ խօսքը... ինչի՞ն անիծել այն  
օրը, երբ նա սկիզբն է դրեւ մեր երջանկութեան,  
Սարգիս, չէ՞ որ ես երդուել եմ յափտեան քոնը  
ուժելու, հօրս սպառնալիքները չեն կարող ազդել

ինձ վրայի նս սկըել եմ քեղ և սիսար սկրեմ մընչւ-  
գերեզման, ինձ հարստութիւնը չէ կարող հրապու-  
թել... Ուժիս ներածին չափ, ես կ'ընդիմանամ հօրս,  
թէ գիտեմ շատ թանկ է նստելու ինձ այդ հա-  
կառակութիւնը... Սարգիս, հոգուս հատոր, ես թոյլ  
եմ... յոյսդ ինձ վրայ զնել չես կարող... Նմէ զու  
ինձ սկրում ես, պատուեատզմիթ հօրս հետ և տիրթը  
ինձ... Դրանով զու ցոյց կրաս քո ոլժը և անսահ-  
ման սկրու:

—Հարկաւոր է ամին բան քաղաքավարութեամբ  
վերջացնել: Եթե մի բան կարելի է սկըով և խա-  
ղաղութեամբ վերջացնել... լիմաւութիւն է բուռն  
միջոցի դիմել... Պէտք է համոզել մօրդ: Ահա իմ  
խօսքը:

—Բայց նրան ոչինչ յայտնի չէ:

Պու սիխով յայտնես նրան ամին բան: Խօսիք  
մօրդ հետ, յալտնիթ մեր սկը և ասա նրան, որ  
ոչ մի հանգամանքում չես կացող հօրդ ցանկու-  
թիւնը կատարել... Ասա նրան, որ դու կապուած  
ես ուրիշի հետ....

—Յիշը անունս և յայտնիք, որ մինք սիրում ենք  
միմեանց: Նմէ կարողացար համոզել մօրդ... Կը  
նչունակի, որ գործը տարած է:

—Կը փորձեմ, ասաց կատարինքն և վերկացաւ  
տեղից—Մայրս սպասում է ինձ... ժամանակ է բա-  
ժանուելու: Մթութիւնից օգուտ քաղելով, նրանք  
գրկախառուեցան և բաժանուեցան երաժիշտ:

Կատարինքն մի պտուտ անելով, մատա ուխտա-  
ուոներին յատկացրած սկնեակներից մինք, ուր և  
ուպասում էր նրա մայթը:

Իսկ Սարգիսը իջնելով օձապողութ սանդուղքներից, անյատացաւ մթութեան մէջ...

Ժ.

Այս անցքերից յետոյ, Կատարինէն սաստիկ վըրդուած, ալէկոնուած և տխուը էր: Նա իւր մօր հետ ոչ խօսում էր և ոչ պատասխանում նրա հարցերին: Մը լինչոր զադմնի զօրութիւն յանկարձակի փոխարկից նրան և սառեցրեց դէպէ իրեն ծնողներն ունեցած որդիկան զգացմունքը:

Նա խորշում էր իւր մօրից և կամենում էր միշտ առանձին լինել...

Հետեւեալ օրը երեկոյեան, բաւական ուշ նրանք վերադարձան տուն: Կատարինէն տուն հասնելուն սկս, առանց մի խօսք արտասանելու, մտաւ իւր սենեակը և փոխերով շրջագեցաւը յոպնած ընկաւ իւր անկողնի վրայ: Կարծես սինեակի ողը խեղում էր նրան: Նա վերկացաւ տեղից և դուրս գնաց պատշճամբ:

Պատշճամբի երկարութեամբ, նա մե քանի անգամ անցուղարձ արտ և ապա նստելով աթոռի վրայ, սկսեց նայել կապոյտ երկնքին, որ այդ ժամանակ վառւում էր անթիւ աստղերով: Եթէ այդ ըստէին նրա դէմքի վրայ նայող լինէր, կը հասկանար, որ հազար ու մէկ մտածմունքներ տանջում էին նրան... Նա անընդհատ հառաջում էր և այդ հառաջանքները դուրս էին գալիս նրա սրտի խորքից... Նա իւր մօր հետ խօսելու յարժար մէջոց էր

որոնում: Մը միտք, որ մերթ ընդ մերթ անցնում նրա երկարութեան միջից, աւելի ևս տանջում էր նշան: Նա վաշնենում էր, թէ մի գուցէ մաշը հակառակէ իւր յանկութեան:

Աստուած իմ, այն ժամանակ լինչ պիտի լինի դըռութիւնս: ես կրոած եմ: Բայց միթէ այնքան անգութ կը լինի մաքրս, որ արհամաշէ իւր միակ ազգի և խնդիրքը:—ասում էր նա և յուս ժամանում էր նրա շրմունքնենիս վրայ:

Նըրեմն նրան թւում էր, թէ մայրը իւր յանկութիւնի հակառակ մերժելու է Սարգսին և դրանով զրկելու է իրեն իւր կեանքի միակ միթարութիւնից: Նրա առաջ սկատկերանում էր այն բոպէն, երբ հայրը կ'ստիպէ իրեն սերելու այն մարդուն, որին 'ի սրտէ աշհամարում է: Նա սկատկերացնում էր այն կեանքը որ պիտի անցնէր յսիրած մարդու, մի ստոր վաճառականի հետ և գալիս էր այն եղրակացութեան, որ ինքը գեռ չծաղկած, իւր հօր շահանոնդրական: Ն վատակների համար, պէտք է թասամամէ....

—Ահ, լինչ պիտի լինի! Սարգսիս գրութիւնը, երբ ինձ բաժանեն նրանից:—Ոչ ես կը մեռնեմ և չնմ բաժանուիլ նրանից... ասում էր Կատարինէն և արտասուքներն հեղեղի նման թափում էին նրա գեղեցիկ աչքերից: Բաւական երկար ժամանակ նա մնաց այդ գրութեան մէջ...

Գիշերուան հովը խփելով նրա բաց կը քին և թեթե զգեցիկ մարմնին՝ ցւրտ զգաց: Նա վերկենալով աեղեց մտաւ իւր սինեակը և զնելով գլուխը իւր մալմարիօնէ ձեռքերի մէջ, ընկաւ մահճա-

կամք վրայ:

Իրար ներհակ մտքեր՝ գալիս անցնում էին նրա բորբոքուած ուղեղի մեջեց... նա շկարողացաւ հանգըստանալ...

Սինեակի մէջ տիրում էր խորին լուռվիւն և այդ անախորժ լոռվթեան մէջ, երբեմն լսում էին դառն և սրտամաշ հառաշանքներ...

Արգէն կէս գիշեր էր:

Քեթեանը ըստ իւր սովորութեան, մտաւ Կատարինէի սինեակը, տեսնելու նրան և բարի գիշեր» ասելու Բայց մեծ եղաւ նրա զարմանքը, տեսնելով Կատարինէին այդ զրութեան մէջ, նա մօտեցաւ անկողին և լսելով նրա հեծկլտանքը, անշարժ մնաց իւր տեղում:

Վերջապէս նա մօտեցաւ Կատարինէին.

—Ի՞նչ խարար է վուրթի, հարցրեց բաւական զարմանալով:

Կատարինէն չլսեց:

—Հիւանդ մս վուրթի... ինչի՞ իս լաց ըլում, ասաց Քեթեանը բռնելով նրա թեր:

—Ի՞նչի՞ չիս խօսում դէնացվալոս դէղէն... իմքին տիզդ խօմ չէ ցաւում: Դոխտուրին կանչիլ տամմ... էրկվում է էրէգ մրսեցար այ...

—Ոչ մայթիկ, ես հիւանդ չեմ, ինձ բժիշկ հարկաւոր չէ, ասաց Կատարինէն և վերկենալով տեղից սկսեց սրբել իւր արտասուքները:

—Բաս ինչի՞ համար իս լաց ըլում...

—Ուշնչ:

—Ինձին ինչի՞ իս թախկացնում վուրթի—վունց օր վարափուրդ իմ անում, կս երկու օրէ դուն մէ

ինչ օր թահար իս... էրկվում է վուր քու մէջը մէղարդ կայ... ին մատնեքի վրէն խօմ ջիգրէ շեկաւ վուրթի... հասցըեց Քեթեանը հետաքրքութեամբ:

—Մատսնիքի համար ես լինչ կարող եմ ասել... Այդ իմ հօր կամքն է... նա կամեցաւ ծախել իւր աղջկան և ծախել է...

—Վունց թէ ծախից... զանա դուն չի՞ս ուզում էնթաւուր պատսական մարթուն. լինչն է պակաս, փուղը թէ անումը...

—Ուշնչ բան պակաս չէ... նա շատ լաւ մարդ է, բայց առանց իմ համաձայնութեան հայրս ոչինչ չակտութ է անէր... նա շատ լաւ պիտի հասկանար, որ ես նրան ուզել չեմ կարող, որովհետեւ լիմ և նրա մէջ ահագին անդունդ կայ: նա շատ հարուստ է, բայց մենք միմեանց հետ ապրել չինք կալող:

—Ի՞նչի:

—Ոցովհետեւ ես նրան սիսել չեմ կարող...

—Ի՞նչի է...

—Նախ այն պատճառով, որ իմ սիրու ուցիշին է պատկանում և երկրորդ, որ մէնք իւրար յարմար չենք... գրեթէ ակամայից ասաց Կատարինէն ամաչելով:

—Վունց թէ ուրիշին... հասցըեց զարմացած Քեթեանը, որի դէմքը այդ սոպէին բարկութիւն էր աբտայալում:

—Ես սիրում եմ ուրիշին...

—Ուսիշին իս սիրում...

—Այժմ...

Քեթեանը մի քանի վայրկեան առշած նայեց  
իւր աղջկան. Նա իւր աչքերին չէր հաստում...  
Նա Կատալինէց այդքան համարձակութիւն չէր  
սպասում:

—Մայթիկ, ներեր ինձ, ո՞ր համարձակում եմ քո  
առաջ այսպիս խօսել. Ես ուրախութեամբ կը հա-  
մաձայնէի այն ժամանակ, երբ չսիրէի ութեան,  
երբ իեանքո նույիրած չլինէի նրան. Այս... մայթիկ,  
ես... սիրում եմ Սարգուն և նա էլ ինձ է սիրում:  
Մինք երգուի ենք յափանան իրավ սիրելու. Եթէ  
հայրս կը այէ ինձ նրանք... ես ինձ կոստանեմ:

—Բայց, եմ քաղցը մայթիկ... միթէ զու թոյլ  
կտաս, ո՞ր քո սիրելի աղջիկը զըկուի իւց միակ  
միկթաշութիւնից և երջանկութիւնից. Միթէ զու  
թոյլ կտաս, ո՞ր ես մեռնեմ: Ու, մայթիկ, զու բարի  
ես, զու ինձ ստիսելու չես. այնպէս չէ մայթիկ:

Այս ասելով, Կատալինէն փաթաթուեց մօքը և  
սկսեց լսու լինել:

—Լաւ չես անում վուրթի... քիզ էդքան հրա-  
ման ողջ էրիս, վուր քիզ հարմա ծայդացու զթնիս,  
գանա քու հէրն ու մէրը մեռած ին...:

Էտ բանը գլուխ գտու չէ վուրթի... լաւն էն է,  
յուր սուս կենաս, ու քու հօքը իմաց շառաս... զու  
խօմ գիշիս քու հօք խասիաթը...\*)

—Ու, մայթիկ, ես նրան չեմ կարող մոռանալ:  
Ես գիտեմ, ո՞ր հայրս խիստ է, բայց այդ խօսու-  
թիւնը երբէք չէ կարող շնորհ ինձ իմ մտադրու-  
թիւնից. Ես սիրում եմ նրան և նրան իմ սպանիա-

նում... Մեզ ոչ ոք չէ կարող բաժանել... Մենք  
ուխտել ենք և այդ ուխտը կը մնայ անխախտ  
մինչեւ գերեզման...

—Մայթիկ, աղաջում եմ... տուր համաձայ-  
նութիւնդ և գանով կը վերջանայ ամեն բան...  
Դու միայն կարող ես ամոքել հօքս սիրտը... հա-  
կառակ գէպքում դու էլ չես տիսնելու քո աղջը-  
կան...

Քեթեանը սաստիկ սիրում էր Կատալինէն, և  
ծանը էր նրա համար միաբարել իւր աղջկան...  
Նա չկամեցաւ նրա վեշտը կրկնապատկել... Նա  
տեսնում էր որ իւր աղջիկն առանց այն էլ տան-  
ջուում է սիրոյ բուռն զգացնունքների տակ. Այս հան-  
գամանքում նա աւելորդ համարեց ստիպողական  
միջոցների զիմելու. Հարկաւոր էր Կատալինէն  
խաղաղացնել և կողմնակի կերպով քանդել այդ  
գործը:

—Էլ ինձի ևս լաց ըլում ու սիրուդ խաղաք ա-  
նում... Մէ քիզ համփերէ. Ծող հէսդ գայ... իս կու  
խօսիմ նրա հետ... բալքայ մէկ բանով էլա կարե-  
նամ սիրտը վափիկցնի... հիմի զուն անմէզ իս  
մաշում քիզ. և նա սկսեց զգուել և հանդարա-  
ցնել Կատալինէն...

—Ուրեմն զու համաձամին ես, մայթիկ... Այս,  
իմ սիրելի մայթիկ:

Եւ Կատալինէն սկսեց ճածկել մօքը՝ ջերմ համ-  
բուքներով:

\*) Բնութիւնը

Քեթեանը ամբողջ զիշես չկարողացաւ քնել։ Նը-  
րան շատ ծանը և անսպասելի էր լժուում այդ նորու-  
թիւնը։ Սարգսի մասին նա վաս գաղափար չու-  
նէր, բայց վիճակացնելու համար միանգամայն  
անցարմար էր համարում։

«Աբա լինչ լայիզ է, վունց կու սազ դայ, ան  
լինչ կոսէ խալխը»։ Լոկնում էր նա, նա հալուստ  
փեսայ էր որոնում, ինքն ևս ցանկութիւն ունէր  
փեսի հարատութիւնով ւշւառ։ Ուրեմն զարմանք  
չէր, որ նա ևս հակառակիշը Սարգսին աղջիկ տա-  
րու, որ բացի գիտութիւնից, խելքից և քաղաքա-  
վարութիւնից, ոչինչ չունէր։ Խոկ խելքն ու գիտու-  
թիւնը առանց զրահի, Սօլօմօն Պետրովիչը հա-  
մար կոպէկի արժէք չունէն։ Սօլօմօն Պետրովիչը  
ամեն բան վողի մէջ էր որոնում։ «Փուզ ասա,  
փուզ» կրկնում էր միշտ Սօլօմօն Պետրովիչը և այդ-  
պէս էլ դա էր տուել Քեթեանին։

«Քանի վուը խալխի բերանը չէ ննզի, էտ  
բանը պիտի վերըսանայ ու քանդվի»—ամփոփեց նա  
և մտածեց կանչել Սաշգսին, ինզրեւ, ազաւել և  
զերջապէս ստիպել, որ իւր աղջկանից ձեռք վերց-  
նէ և «քարը քարի վթէն զնէ ու հիդ կանգնի, քա-  
նի վուը վունց խալխին է իմայի, վոնց Սօլօմօնը»։

Նա այս ձեզ յարմաշ էր համարում, ուրովհետեւ  
նա համոզուած էր, որ Սարգսին տեսնելով, որ ի-  
րեն մերժում են, յետ կը կանգնի և այդ լաւ սպա-  
հառ կը լինի Կատարինէն ևս համոզելու, որ մո-  
ռանայ Սարգսին, քանի որ «Նա էլ երան չէ սի-  
րում»։

Հետեւալ օրը ներկայացաւ Սարգսիը համա-  
ձանք Քեթեանի հրաւէրի։

Նըանք ասանձնացան սենեակներից մինում,  
երկար խօսեցին, վիճեցին և մինչև անգամ Քե-  
թեանը սկսեց վերաւորել Սարգսին բաւական ան-  
վայել խօսքերով։

Սակայն Սարգսիը յամառութեամբ պնդում էր  
իւր ասածը...

—Տուէք ում և կամենում էք, բայց իմանաք,  
որ թանկ է նստելու ձեզ այդ բանը։ Այսուհետեւ  
գործեցէք ձեր խղձի համաձայն, ինձ ոչինչ չէ  
մնում անելու, բայց եթէ շնորհակալութիւն յայտ-  
նելու ձեզ ձեք քաղաքավարի վարմունքի համար  
և հեռանալ։

Նա վերցնելով գլխարկը, խոնարհութեամբ ող-  
ջոնեց Քեթեանին և գուրս եկաւ սենեակից։

Նախասենեակում, դպին առաջ, կանգնած լըր-  
տեսում էր Կատարինէն, որ Սարգսին տեսնելուն  
պէս, առաջ անցաւ և մօտենալով նրան՝ հարցեց  
գործի վախճանը։

—Բաժանում են մեզ, ասաց Սարգսիը վրգո-  
վուած, և երեսը զարձրեց Կատարինէից, որ վեր-  
ջինս չտեսնէ իւր աչքերի արտասուրները, որ այդ  
րոպէին սկսել էլն առասորէն հոսել...

—Բաժանում են... բացականչեց Կատարինէն և  
թուլանալով՝ գետին փռուեցաւ,....

## ԺԱ.

Սոլօմօն Պետրովիչը Թիֆլիս գալուն պէս անզեկացաւ ամեն բան։ Նրա կին Քեթեանը մանրամասնաբար ներկայացրեց երենց տան հանգամանքը և խորհուրդ տուեց որքան կարելի է աւելի խռուն և խելացի ծիջոցների դիմել։

Քեթեանը նրան մեղադրեց, որ մի այնպիսի գուծ, որպիսին է իրենց աղջկայ ամուսնութիւնը, այդպէս վայր ի վերոյ է վերջացրել։ Նա յայտնեց նրան, որ այդ հանգամանքը ծանր դրաւթիւն է ներկայացնում և բաւական է մի սխալ քայլ, որ իրենք խայտառակուն ժողովրդի առաջ և «մե մատը միշտ դառնան»։

Ախար, քիզ ովկ էր ասում, վուր քիզ ու քիզ բան բռնիւս Մէ հալա դէվէր գուրքէր քաղաք, թէ մտքումդ էլ մէ բան ոմէկը էնչալն էլ կօնէլս. գանա գուն հենց գետէր, թէ Խսակի Մընէւլն ձեռնմէդ խլում ինն.. Աքա, հիմն ինչ անինք, էստի դուն իս անուատիւ ըլում, չունքի էն մարթուն խտակ խօսք իս տվի, էնդի խեղճ էրէլսէն (Կատարինէն) է հալ ու մաշ ըլում, ու բս էլ ձիք մէջը հազար ու մէկ մարթումէն թուք ու մուր ուսում,— ասում էր Գնթեանը բոլոսովին վշտացած։

Իս քիզ ասիլ իմ ու էլի կօսիմ, վուր իս Սաւակուն աղջկի չիմ տայ, իս ջուրը գցէլու ախչել չունիմ... իս գլխիս գղակ ունիմ ծածկած, չիմ վլիկաւնը ու ցիխը չիմ գցի, իս հասակի մարթ իմ դարի, ոչովին վունց գէթ իմ արի, վունց էլ տուած խոս-

քըս իմ կոտրի, իս էն մարթուն իմ տուի ախչկաս ու պիտի տամ... էտումը Քեթեան ուար\* ) չկայ, թէ կուզ մէջէտմէն կէս ըլիս.. Տօ՛... բաս էլ ինչ հէր իմ, վուր իմ ախչկան էլ չկարենամ գաւթիս\*\* ) Գանա Կատարինէն քանի գլուխ ունէ, վուր իր քէ- ֆի է ման գալի, գանա նա չի գիդի իմ խասիա- թը, Տօ՛, գորչցի մատրաբազ, գիմեց բարկացած Սոլօմօն Պետրովիչը իւր կիոջ. — Էտէնց իս գու ախ- չկան մտիկ տալի... նրանք վուր սազ ու բազ էն անում, բաս զուն մեռիլ ան քոռացիւ էլիր... Գանա զուն էնքան բէուզուփ\*\*\* ) իս, վուր վունչիչ չէլիր իւմանում... Զննց գցինք թէ, քու ախչելը ա- նասակութիւն էր արի ու գլխիդ չեքեւէն վիր էր կալի ու ազրն էր գցի, գանա էտէնց պիտի միու էր նստի ու ականջդ բարձնչու արթ... վայ... իս գու զէմն անովի չէրն իմ անիծի, Քեթեան... վիկաց գնա, էն ախչկադ ասա վուր ձէնը կտրէ... թէ չէ, քիզ էլ կու սպանիմ նրան էլ... իմ արեւը կու սպանիմ...»

Սոլօմօն Պետրովիչը երեն կրցրել էր. Մի կող- մից 20,000 բուրլու կորուստը, միւս կտղմից ընտա- նեկան այդ անակնկալ հանգամանքը, միանգա- մայն հանեցին նրան իւր համբերութեան սահմա- նից։

Նա այնքան իւր աղջկայ վրայ չէր մտածամ, որքան պայմանակալը վրայ, որ տուել էր երեն Խոայի

\*) Ու

\*\*) Սահմակ

\*\*\*) Անմիտ

Մինէիչը: Նա յեշում էր պայմանաթղթի այն տողերը թէ «Եթէ արգելքը Խսակի Մինէիչից լինէր, նա ձեռք էր վերցնելու 10,000-ից...»

—Բայ վրւր ևս ըլիմ պատճառը... պիտի հազար լուսանն էլ կորցնիմ էլեր...

Աւ Սօլօմօն Պետքովիչը կատադում էր:

\* \* \*

Խսայի Մինէիչը խստացել էր, որ Թիֆլիս վերաբառնալուն պէս հրապարակով «աէրտէրի օհհնանքով նշան տայ:

Սօլօմօն Պետքովիչը ցանկանում էր, որ նշանագրութիւնը բաւական լքեղութեամբ կսասացուի: Մի առաւօտ յայտնեց Քեթեանին, որ հրապարակական նշանագրութիւնը լինելու է հոկտեմբերի հնգին, որովհետև գետա այդպէս է կամենում և ուրեմն պէտք է հարկաւոր պատրաստութիւններ տեսնել:

Իսկ ինքը դուրս գնալով տնից՝ ամբողջ օրը չվերապարձաւ:

Նոյն օրը երեկոյեան Սօլօմօն Պետքովիչը վերադառնալով տուն, իշաւ պարտէզ և թէյ պահանջեց: Նա բաւական տխուր էր: Այն օքը նա գնացել էր մի օգտակար կապաւ վերցնելու, բայց նրան չէր յաջողուել. ամենաշնչին բանի համար նա հրաժարուել էր և կապաւը վիճակուել էր մի ուրիշին: Ոհա այս էր նրա տխրութեան պատճառը: Մի ժամից յետոյ բակը մտաւ Խսայի Մինէիչը, որն հա

տէսնելով, որ Սօլօմօն Պետքովիչը պարտիզումն է, ինքն ևս մտաւ պարտէզ:

Նշանք երկար խսեցին, Այդ խօսակցութիւնը վերաբերում էր այն օրուան կապաւին: Վերջում Խսայի Մինէիչը յատնեց, որ զօրքերին հաց մատակարարելու համար, հոկտեմբերի 20-ին աճուրդ է նշանակրուած: Նշանք խորհրդակցեցին և վճռեցին միաւին վերցնել: Գյշերուան 11 ժամին բաժանուեցան միմեանցից:

Խսայի Մինէիչը գնալուց յետոյ, Կատարինէն Քեթեանի թիւը մտած իջաւ պարտէզ և սկսեց գրառնել իւր մօր հետ: Իսկ Սօլօմօն Պետքովիչը նըստած մի տեղում և ծխում էր և մտածում: Ապագայում վերցնելիք կապալի համար ծրագիրներ էր կազմում, և մի վերջնական եղբակացութիւն անելուց յետոյ, վերկացաւ տեղից և մօնեցաւ Կատարինէն:

—ՀՇ, էրէխումթինդ թողթը ևս թիւ չէ, հարցըց Սօլօմօնը ժառանգուի:

—Ինչպէս...

—Ենէնց վուր, իս խմացիւ իմ վուր գլխումք մէ քիչ չահելութենիք քածի է մտիս... ասիլս էն է թէ, դուս էկամտ, թիւ չէ...

Կատարինէն շպատասխանեց:

—Ի՞նչ գուս գուքէս, բայ խօմ չէր մնայ: . Էն էլ մի բան էր էլի... վաշտապիտի խաթրն էր ուղում պահի... պատասխանեց իւր կոզմից Քեթեանը:

—Ա՛յ... ապրէն իմ ախճիկը: Հիմի դուն տիս Կատարինէ չան, թէ միշ փեսէն ինչ բանիր կու բերէ

քեզ համա... ասաց Սօլոմոնը կամենաւով գրաւել իւր աղջկայ ուշադրութիւնը:

— Ինձ ոչինչ պէտք չէ... Նա շատ լաւ կանէ, որ ինձնից ձեռք վերցնէ. ասաց Կատարինէն արհամարական շարժումով. և. վերջապէս, չէ՞ որ ես խնդրել եմ նրա անունը չցեշել...

— Հազար էլ վուր նիկանաս, վունչիւ չի ըլի... իս քիզ նրա վընէն նշնիւ իմ ու բանը պըծած է. էլի լաւ կօնիս վուր ձէնդ կտրիս ու գլուխդ քաշ գցած կենաս: Նա էնթաւուր մարթ է վուր, իփօր կու փսակուք էնչալսը կու իմանաս,—ասաց Սօլոմոնը ծանրութեամբ:

— Ես պատակուելու չեմ... ես...

— Իս քիզ ասում իմ ձէնդ կտրէ, խօսքը կտրեց Սօլոմոնը.—դուն հրաման չունիս խօսելու, քանի վուր իս կանգնած իմ քու գլխին: Իս քիզ չիմ թողնի քու կամքով բան բռնելու: Իս ասիլ իմ ու պետի անիմ: Դուն հենց գիւղս հանմաք իմ անում... խօմ ինձ ճանչնում իս... կուսպանիմ Աստուծ գիւենայ, աւելացրեց նա բարկանաւով:

— Ինչ կամենում ես աշա... այն մաշդու անունը մի ցիշեթ... ես նըսան ատում եմ և եզրէք սիրել չեմ կարող: Ես սիրել եմ մինչն, որին ինքու ճանաշում ես... կամ նրա հետ պետի ամուսնանամ և կամ ոչի հետ: Այս իմ վերջին խօսքը... ասաց Կատարինէն գողարով բաշիրութիւնից և վախից:

— Բաս իս վունչիւ էլի... Այս ասելով Սօլոմոն Պետրովիւր այնպէս ապաւիկեց Կատարինէին որ եթէ մարը չըսնէր, գուցէ գետին ընկնէր,—Գեղինը մտնիս գուն անգիւմ, լիրք... զանա էտքան

համարձակութիւն ու աննամուսութիւն էլ ունիս... իմիօր էտէնց է, գուն էլ իմ ախչելը չիս. գնամ... գնամ կորի էտողանց...

— Հայր... ինայիթ ինձ. Միթէ ես յանցաւոր եմ, որ սիրել եմ Սարգսին: Միթէ դու կամենում ես դրժբաղդացնել ինձ, տալով լինձ այնպիսի մարդուն, որին չեմ սիրում: Խնայթ հայր, աղաւում եմ, ասաց Կատարինէն ընկնելով հօր ոտների առաջ:

— Բաս թնչի իս կոտրում խօսքս: Իս քիզ ասում իմ վուր դուն ձեռք վիկալ Սարգսիթէն, իս քիզ Խսայուն իմ տվի... ուրիշ վունչիւ:

— Ոչ, հայր... ես Սարգսին մոռանալ չեմ կարող... Մենք սիրում ենք իրար... իմ սիրուը նրան է պատկանում և ուրեմն ուրիշինը կարող չէ լինել... Ի՞նչի էք կամենում բաժանել ինձ նըանից..: կամենում էք սպանել ինձ... Սպանեցէք... ես ատում եմ Խսայուն... ես...

— Այս, հայր... և արտասուքի կաթիւները խեղդեցին նըան ձայնը:

— Իփօր նըան չիս սիրում ու ատում իս... վիկաց կորի աչքեմիս: և Սօլոմոն Պետրովիւր բռնելով նըան թևեց սկսեց քաշ տալ դէպի պարտէկի գուռը:

— Քա, թնչ իս անում. էլի գժուեցամբ, բացականչեց Փեթեանը և յարձակուելով Սօլոմոնի վրայ, կամենում էր աղաւիկ իւր աղջկան հօր կատաղութիւնից:

— Դէնը կորի, ասում իմ է. գուաց Սօլոմոնը և քաշտալով Կատարինէին, բացեց փողոցի գուռը:

— Հիմի գնա գու Սարգսի մօդ, գուն էլ իմ ակա-

Հիկը Ժիս:

Եւ Հրելով Կատապէնէին դէպի գուրս, դուռը փակեց վրան:

Քէթե անը առաջ ընկաւ և կամեցաւ ներս բերել աշջկան, սակայն Սօլօմօն Պ'արովիչը, որ եւս կատաղութեան գագաթնակէտին էր հասել, ուժքով մի այնպիսի հարուած տուեց Ք'թե անին, որ վերջինս մի քայլ յետ ընկնելով թուլացաւ և դեմին փռուեցաւ:



Դուրսը սաստիկ մութ էր: Խշերուան ուշ ժամը լինելով, փողոցներում զազարել էր երթեւեկութիւնը: Կատարինէն, գրեթէ կիսամեռ, կծկուած մի անկիւնում հեկեկում էր: Նա մսածում էր վեր կենաւ տեղից և ծեծել հայեանի գուռը, բայց այդ երեն համար խայտառակութիւն էր համաշում: Սարգսի մօտ գնաւ չէր կարող, որովհետեւ մայրն այնտեղ էր. նա վորձեց ծեծելու իրենց գուռը: Այդ նակատակով նա վեր կացաւ տեղից, մօտեցաւ իրենց գրանը և կամեցաւ քաշել զանգը բայց չհամաշճակուեց և ... նա վճռեց սպասել, մինչեւ իւր հօշ բարկութեան իջնելը: Նա համոզուած էր, որ իւր հայրը դարձեալ ներս կառնէ իրեն:

Նա վերադառն իւր տեղից և առաջուան նըման կծկուելով, գլուխը գրեց իւր ձեռքերի մէջ և միսաւ լաւ...

Յանկարծ ընկաւ նրա վրայ մի բան, որ ծածկերէ նրա երեսը՝ խառարեցրեց ամին բան...

Չորս անծանօթ ձեռքեց յափշտակեցին նրան և անչայտացըին:

Մի քանի ըուպէց յետոյ, նա գտաւ իշեն զինետներից մինում, շըչապատուած սրիկայ ծաղդկանցով...

Նա փորձեց օգնութեան կանչել, բայց այդ չաշջողուեցաւ... բերանը փակել էին:

Հետեւալ օրը, առաւօտեան, դեռ արեւ չծագած, զինետան մի կողմը կանգնած էր սստիկանութիւնը և արձանագրամ էր եղելութիւնը... իսկ միւս կողմը ընկած էր Կատարինէի գրեթէ անշրջացած. . . .

Նրան տարան քաղաքային Հիւանդանոց:



ԺԲ.

Կառավինէն չկարողանալով տանել իւր չար-  
արանքը, առաջացում վէսքերի անտանելի ցա-  
լից, երեք օրից յետոյ ԿԵՐԱՅՑ իւր ժահկանացուն:

Թէկ Սօլօմօն Պետրովիչը իւր երբեռու վկաներով,  
կարողացաւ զանազան միջոցներ գործ դնելոց  
յետոյ արգաբանալ դատարանի աշաջ, բայց իւր  
խիզչը տանջում էր: Նա ոչ քուն ունէր և ոչ  
հանգստութիւն: Նրա գլուխ մազերը մի քանի ժա-  
մանակում այնպէս ճերմակիւ էին, որպիսին չէ լի-  
նում տասն տարուայ ընթացքում:

Եւ այս բաւական չէր. Նրան սպասում էր աւելի  
մեծ դժբաղդութիւն: Պարտատիրերը վող էին պա-  
հանջում, բայց ամենքին չէր կարողանում բաւա-  
կանութիւն տալ: Նրա գործակատարները և հա-  
ւատարմատարները խառնակ հանգամանքից օգուտ  
քաղելով, սկսեցին անխնայ կողոպտել նրան:

Խոայի Մինէիչը մուրչհակի ժամանակը լրացած  
էր համարում... նա պահանջեց 20.000 ըստըլի,  
առարկերով, որ ինքը պսակին ոչինչ արգելք չէ  
դրել և թէ արգելքը իրենց կողմէցն է....

Բաւական մարդեկ մէջ ընկնելով, հաջողեցին  
Խոայի Մինէիչին, որ մի այլպիսի չլսուած պահանջ  
չանէ... նամանաւանդ Սօլօմօն Պետրովիչը, որ ա-  
ռանց այն էլ բաւական ընկել էր:

Սօլօմօն Պետրովիչը պարտքերը չկարողանալով  
հասուցանել, իրեն ՍԵՎԵՆԿ հրասարակեց. իսկ  
Խոայի Մինէիչը իւր 10,000 ըստըլու համար ոչ մի-

այն հզան չեղածը ծախել տուեց, այլ և իրեն  
Սօլօմօն Պետրովիչը և կարողանաւ ավ տանել այս

հայուածները, իւր հօր նման կաթուած ստացաւ  
և մեռաւ բանտում:

Իսկ Փեթեմնը:

Սրա համար ձանը էր տանել ներկայ կեանքը.  
Նա լիշում էր իւր անցեաւը և համեմատելով ներ-  
կայի հետ, ուրո ուր արտասուքներ էր թափում,  
Նրա հայրը այց ես չկաց. այս անցքեց մէկ ամիս  
առաջ թունաւորելով իսկն՝ մեռել էր, թողնելով  
իւր եամեց մի պատկառելի պաշտք: Փեթեանը  
դիմէց իւր եզրօրը և յալոնելով իւր գրութիւնը,  
խնդրեց նրան իրեն Գօրի տանելու և պահելու հօ-  
րանց տանը:

Խղբայը մեթեց:

Հաց թխել, լուսոցք անել կամ մի տեղ ծառայ-  
ութիւն անել, կար կարել չէր կարող, որովհետեւ  
ոչ գլուխ և ոչ կանչը: Նրա մէջ, չնայելով իւր  
ընկած գրութեանը, գեռ ևս պահպանում էր փա-  
ռասիրութիւնը և հպարտութիւնը: Բայց ժամանա-  
կը յաղթեց նրան, և Փեթեանը հետզետէ ըն-  
կառ բարոյապէս և ԿՈՐԱՒ ամենօրեայ կեանքի ան-  
յացութեան մէջ. . .

Բայց թնձ հղաւ Սարգիսը:

Հաստատ ոչինչ յայտնի չէ... մի քանիսը ասում  
են խելագարուել է, միւսները կարծում են, որ  
խեղգուել է, իսկ նրա բարեկամներից շատերը  
հաւատացնում են, որ նա, Կատարինէի մահից  
յետով, իւր սրտի համար ոչինչ միսեթարութիւն  
չգտնելով, թողել է Թիֆլիսը և քաշուել է արտա-  
սահման....

Վ Ե Ր Զ.



ՎԱՀԱՐԻՈՒՄ Ե.

ՀԱՅ

ԳՐԱՎԱՃԱՌԱՆՑՈՅՆԵՐՈՒՄ

ԳՐԱՆ Ե 20 ԿՈՊ.

Եւ հրատարակչի մօտ—ԱԽԱԼЦԻԽЪ

Օվանեսу С. Գրիգորյանցъ.

2013

13364

